

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



«ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|--|
| Հաշվեքննության հիմքը | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 21-ի թիվ 6/2, 6/3, 6/4, ապրիլի 11-ի թիվ 8/7, մայիսի 14-ի թիվ 11/9, հունիսի 28-ի թիվ 14/2, հուլիսի 18-ի թիվ 15/8, սեպտեմբերի 27-ի թիվ 21/5, 21/6 և 21/9 որոշումներ: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն: |
| Ստուգման օբյեկտը | «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ: |
| Հաշվեքննության առարկան | «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը: |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2017 թվականի հունվարի 1-ից 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը | 2019 թվականի մարտի 28-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Զննման և դիտարկման ընթացակարգերի իրականացման ժամկետը՝ 2019 թվականի ապրիլի 15-ից մինչև 2019 թվականի հունիսի 7-ը ներառյալ: |
| Հաշվեքննության տեսակներ | Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն: |
| Հաշվեքննության ընթացակարգեր | Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը: |

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԵրՋԷԿ կամ Ընկերություն) կողմից 2017 թվականի և 2018 թվականի ընթացքում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Հաշվի առնելով միջազգային որոշ պայմանագրերին առնչվող տեղեկությունների բնույթը հաշվեքննության ընթացիկ եզրակացության մի մասը ներկայացվել է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Մենք հետևեցինք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական գործունեության իրականացումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ անհամապատասխանության հետևանքով ԵրՋԷԿ-ի կողմից իրականացվող գործընթացի էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ԵրՋԷԿ-ի կողմից իրականացված ֆինանսատնտեսական գործունեությունում առկա են անհամապատասխանություններ ՀՀ օրենսդրության պահանջների հետ, մասնավորապես՝

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 1-ին կետում, առկա է անհամապատասխանություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ

օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի և Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջներ հետ, 2017-2018թթ-ին ընթացքում թվով 10 աշխատակիցների հետ կնքել է հաստատված հաստիքացուցակների դրույքաչափերից պակաս պայմանագրեր, իսկ թվով 77 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքված են եղել հաստատված դրույքաչափերից պակաս մինչև 2017թ և 2018թ-ի հաստիքացուցակների հաստատումը, հաշվեքննության ժամանակահատվածում փոփոխության չեն ենթարկվել, արդյունքում 2017-2018թթ ընթացքում թվով 87 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին պակաս են հաշվարկել և վճարել **21,218.3 հազ. դրամ:**

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, առկա է անհամապատասխանություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի և Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջներ հետ, 2017-2018թթ-ին ընթացքում թվով 10 աշխատակիցների հետ կնքել են հաստատված հաստիքացուցակների դրույքաչափերից ավելի պայմանագրեր, իսկ թվով 11 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքված են եղել մինչև 2017թ և 2018թ-ի հաստիքացուցակների հաստատումը՝ դրույքաչափերից ավելի, հաշվեքննության ժամանակահատվածում փոփոխության չեն ենթարկվել, արդյունքում 2017-2018թթ ընթացքում թվով 21 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին ավելին են հաշվարկել և վճարել **7,476.9 հազ.դրամ:**

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 3-րդ կետում, թափուր հաստիքների համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի գումարները ուղղվել են աշխատակիցների պարգևատրման և աշխատավարձի հոդվածով ծախսվող այլ վճարումների համար: Սակագնի ձևավորման մեջ ներառվող աշխատավարձի ֆոնդի գումարներից, թափուր հաստիքների համար նախատեսված գումարների հաշվին 2017թ-ին ընթացքում աշխատողների համար հաշվարկվել և վճարվել են **64,731.5 հազ. դրամ** և **84,489.1 հազ. դրամ** պարգևատրում, այն դեպքում երբ հաստատված հաստիքացուցակների համաձայն միավոր աշխատավարձի մեջ ի սկզբանե ներառվել են աշխատողների հիմնական աշխատավարձը և աշխատողների համար նախատեսված ամենամսյա պարգևատրումները՝ հիմնական աշխատավարձի 5%-ից մինչև 45%-ի չափով: 2017-2018թթ. այն կազմում է համապատասխանաբար **115,600.6 հազ.դրամ** և **122,798.8 հազ.դրամ**, ընդամենը **238,399.4 հազ.դրամ:** Աշխատակիցների հետ ի սկզբանե աշխատանքային պայմանագրերը կնքվել են նույն տրամաբանությամբ՝ պայմանագրի մեջ նշելով նաև պարգևատրման տոկոսի չափով գումարը: Հաստիքացուցակում կամ աշխատանքային պայմանագրում տոկոսային հարաբերությամբ պարգևատրման գումարների ներառումը «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» անհամապատասխանություն է, քանի որ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 178-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պարգևատրումը օրենքով, այլ

նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

2017թ.-ի ընթացքում ընկերության աշխատակիցների համար հաշվարկվել և վճարվել են 180,332.1 հազ. դրամ /64,731.5+115,600.6/ պարգևատրում, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 26% և 2018թ.-ի ընթացքում հաշվարկվել և վճարվել են 207,287.9 հազ. դրամ /84,489.1+122,798.8/ աշխատավարձ, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 27.4%:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 5-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և ABB AB, Substations և Cobra Instalaciones Y Servicios S.A. կոնսորցիումի հետ 2016թ. հուլիսի 14-ին կնքվել է նոր ենթակայան կառուցելու վերաբերյալ պայմանագիր, սակայն կառուցման աշխատանքները սկսվել են 2017թ. հունվարից՝ ֆինանսավորումը ուշացնելու հետևանքով: Գործողության ժամկետը սահմանվել է 17 ամիս, որը հետագայում երկարաձգվել է մինչև 20 ամիս/ և կառուցման ավարտ է սահմանվել 16.09.2018թ.: Արդյունքում ծրագիրը չի իրականացվել սահմանված ժամկետներում, ավելին՝ մինչև 31.12.2018թ. չեն ստորագրվել աշխատանքների կատարման վերջնական արձանագրությունները, ինչպես նաև չեն հաշվարկվել աշխատանքների ուշացումների համար պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների գումարները:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 6-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում առկա են <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և ծրագրի խորհրդատու հանդիսացող CESI S.p.A. և INCICO S.p.A. համատեղ ձեռնարկություն և Ameria CJSC (ենթախորհրդատու) միջև կնքված պայմանագրի դրույթների անհամապատասխանություններ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թ. փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանի, մասնավորապես հավելված 1-ով և հավելված 2-ով հաստատված օրինակելի ձևերի պահանջների հետ:

Ընկերության դեբիտորական պարտքերը առ 31.12.2016թ. կազմել են՝ 21,721,131.1 հազ. դրամ, առ 31.12.2017թ. կազմել են՝ 20,912,825.0 հազ. դրամ, իսկ 31.12.2018թ. դրությամբ այն կազմել է՝ 18,487,210.9 հազ. դրամ: Ընկերություն կրեդիտորական պարտքերը առ 31.12.2016թ. կազմել են՝ 28,577,466.7 հազ. դրամ, առ 31.12.2017թ. կազմել են՝ 36,945,113.3 հազ. դրամ, իսկ 31.12.2018թ. դրությամբ այն կազմել է՝ 28,726,807.3 հազ. դրամ:

Ընկերության դեբիտորական պարտքը «Քիմպրոմ մենեջմենթ» ՓԲԸ-ի մասով 31.12.2018թ. դրությամբ կազմել է ընդամենը՝ 12,331,234.5 հազ. դրամ, որից 10,709,608.7 հազ. դրամը մայր գումար, իսկ 1,621,625.8 հազ. դրամը չվճարված

գումարի վրա հաշվարկված տոկոսներ: Ընկերությունը պարտքը ճանաչել է անհուսալի և արդյունքում «Քիմպրոմ մենեջմենթ» ՓԲԸ-ն չկատարելով պայմանագրերով ստանձնած պարտավորությունները Ընկերության հասցրել է 12,331,234.5 հազ. դրամի վնաս:

Ընկերության դեբիտորական պարտքը «Վարդենարտ» ՍՊԸ-ի մասով 31.12.2018թ. դրությամբ կազմել է ընդամենը՝ 219,020.0 հազ. դրամ, որից 89,300.0 հազ. դրամը մայր գումար, իսկ 129,720.0 հազ. դրամը չվճարված գումարի վրա հաշվարկված տույժեր: Ընկերությունը միջնորդություն է ներկայացրել դատարան հայցի ապահովումը կիրառելու պահանջով և 16.04.2019թ. միջնորդությունը բավարարվել է՝ պատասխանողի գույքի վրա արգելանք է դրվել:

Ընկերությունը 2017թ-ին կատարել է շուրջ 301,738,0 հազ. դրամի մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումներ, մասնավորապես՝ արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, որով և առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ, ինչպես նաև չեն կնքվել պայմանագրեր, որը հակասում է 22.12.2010 թվականի «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

2018թ. գնումներն իրականացնելիս, համաձայն ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման, Ընկերությանը թույլատրվել է որոշ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնել անմիջապես արտադրողներից կամ վերջիններիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձանցից և 794,168.79 հազ. դրամի գնումները կատարվել են մեկ անձից և առանց համապատասխան պայմանագրեր կնքելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 71-րդ կետի պահանջների հետ:

Ընկերության կողմից 2018թ.-ին «Aryanko Trading» և «MOOG INC. Industrial Controls Division» ընկերություններից ձեռքբերումները մեկ անձից գնման ձևով չեն հիմնավորվում (գնումները կատարվել են մինչև ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման ընդունումը): Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի «Մեկ անձից գնում կատարելու պայմանները» պահանջների հետ:

2017-2018թթ. Ընկերության կողմից կատարվել են գնումներ, որոնց հրավերների տեխնիկական բնութագրերում հղում է կատարվում գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ:

«Գազատուրբինի մոդեռնացում C2 ինսպեկցիայի ժամանակաշրջանում աշխատանքների ծավալները ըստ GE ընկերության ընթացակարգի» ԵՐՋԵԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով մրցույթում հաղթող ճանաչված «Տեպլոէներգամոնտաժ» ընկերության հետ կնքվել է 346,624.0 հազ. դրամի պայմանագիր, որում՝

ա) Մրցույթի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները չեն պարունակել «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից թերի ներկայացված փաստաթղթերի արձանագրումներ, հետևաբար՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 47-

րդ կետով սահմանված անհամապատասխանությունների շտկման համար մեկօրյա ժամկետի տրամադրման հնարավորություն:

բ) Մրցութային հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով բաց մրցույթի հրավերի մաս 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի (4),(գ) և հավելված 5.2-ի վերջին պարբերության պահանջները, այն է՝ «Ամբողջական չեն անձնակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերը»: Արդյունքում «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի հայտը բավարարվել և ճանաչել է հաղթող, վերջինիս հետ կնքել է պայմանագիր:

գ) Համաձայն Ընկերության կողմից տրված տեղեկատվության, «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի աշխատակիցների «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի տարածք մուտք գործելու և դուրս գալու հաշվառման անհրաժեշտություն չի եղել, իսկ կապալառու կազմակերպության կողմից ներկայացված գրությունների համաձայն թվով 84 աշխատակիցների տրվել է ժամանակավոր անցագրեր, որոնցից միայն 34 անձի անուն ազգանուն կա պահանջվող անձնակազմի 113 հոգանոց ցուցակում, իսկ 36 հոգանոց լրացուցիչ (ՀՀ քաղաքացիներից կազմված) ցուցակից և ոչ մեկի անունը չկա ժամանակավոր անցագրեր ստացածների 84 հոգանոց ցուցակում: Առկա է անհամապատասխանություն հրավերով պահանջված աշխատողների թվաքանակի, կապալառուի կողմից որպես աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշին համապատասխանության համար ներկայացված աշխատողների ցանկի և անցագիր ստացած կապալառուի աշխատողների թվաքանակի և անձնական տվյալների միջև:

դ) Համաձայն Ընկերության կողմից տրված տեղեկատվության, պայմանագրով սահմանված որոշ աշխատանքների կրճատումը և լրացուցիչ աշխատանքների կատարումը պայմանավորվել է, սարքավորումների նորոգման ժամանակ քանդելուց, կազմատելուց հետո բոլոր հանգույցների արատանշման և զննման արդյունքում հայտնաբերված թերություններով, ինչպես նաև որոշ աշխատանքների կատարման անհրաժեշտություն չառաջանալու հանգամանքով, որի նպատակով ընկերության և կապալառուի հետ ստորագրվել է հիմնական սարքավորումների թերությունների արձանագրման թվով երկու ակտեր: Նշված փաստաթղթերը (ակտերը) կազմվել են 17.09.2018թ-ին՝ պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտից ընդամենը ինը օր առաջ, միաժամանակ նշվել է նաև որ լրացուցիչ աշխատանքները կատարվել են ոչ թե 26.09.2018թ-ից մինչև 08.10.2018թ. ժամանակահատվածում, այլ դրանց ի հայտ գալու պահից: Վերը նշվածից հետևում է, որ լրացուցիչ աշխատանքները կատարվել են առանց պայմանագրում նախօրոք փոփոխություններ կատարելու՝ համաձայնագիր կնքելու:

ե) Լրացուցիչ աշխատանքների (լրացուցիչ համաձայնագրի տեխնիկական բնութագրի 116-րդ կետով) սահմանվել են հետևյալ աշխատանքները՝ «գազատուրբինի ռոտորի հանում, հետ տեղադրում և կոմպրեսորի ու տուրբինի թիակների հղկում տաշում (расточка торцов лопаток)», բայց գազատուրբինի ռոտորի հանման և հետ

տեղակայման, շինհրապարակ տեղափոխման աշխատանքները նախատեսված են եղել պայմանագրով (տեխնիկական բնութագիր 74-րդ կետ) և դրանց կատարողականները ներկայացված են եղել մինչև լրացուցիչ համաձայնագրի կնքումը N1 և N2 կատարողական ակտերով:

զ) Հղկման (расточка) աշխատանքներ կատարվել են միայն կոմպրեսորի թիակների վրա, որը նախատեսված և ցուցված չի եղել ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի հիմնական նորոգման աշխատանքների տեխնիկական կանոններով, պահանջներով կամ ստանդարտներով: Չի ներկայացվել նաև տեխնիկական հսկողություն իրականացնող «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության ցուցումները տվյալ աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես, որ առկա է «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության գրություն ուղղված ընկերությանը, որով «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության տեխնիկական դեպարտամենտը արձանագրել է մատակարարված թիակների մասով խնդիրներ և առաջարկել է իր հաշվին իրականացնել դրանց հնարավորինս շուտ փոխարինումը և փոխադրումը:

է) «Գազատուրբինի մոդեռնացման աշխատանքներ C2 ինսպեկցիայի շրջանակներում» (ծառայությունների մատուցում) «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության կողմից», մեկ անձից գնում, որի պայմանագրի գինը կազմել է 783,240.9 հազ. դրամ և «Շոգետուրբինի կապիտալ աշխատանքներ C2 ինսպեկցիայի շրջանակներում» (ծառայությունների մատուցում) «Ֆուջի» ընկերության կողմից», մեկ անձից գնում, որի գինը կազմել է՝ 266,509.4 հազ. դրամ գործընթացներում կապիտալ աշխատանքների ժամկետների երկարացման արդյունքում Ընկերությունը կրել է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝ «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության մասով 158,015.71 եվրո, իսկ «Ֆուջի» ընկերությունների մասով՝ 15,426.36 ճապոնական իեն:

ը) Կապիտալ վերանորոգման աշխատանքների ժամկետը նախատեսված 51 օրից փաստացի կազմել է 62 օր: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման՝ սեփական կարիքների («ՀԷՑ» ՓԲԸ-ից) համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի համար Ընկերությունը պլանավորել էր կատարել 45,740 հազ. դրամի ծախս (քանի որ փոխհոսքերի գործառույթը չի պլանավորվում), սակայն փաստացի կատարել է 80,113 հազ. դրամի, որից 26,447.0 հազ. դրամը (1,303,824 կՎտxժ) փոխհոսքեր գործարքի շրջանակներում էլեկտրական էներգիայի արտահանման համար, այսինքն Ընկերությունը առանց փոխհոսքերի «ՀԷՑ» ՓԲԸ-ից սեփական կարիքների համար ձեռք է բերված էլեկտրական էներգիան կազմել է 53,666 հազ. դրամ: ՀԾԿՀ-ի կողմից հատկացված 45,740 հազ. դրամի փոխարեն Ընկերությունը փաստացի ՀԷՑ ՓԲԸ-ից ձեռք բերված էլեկտրական էներգիայի գծով ծախսը կազմել է 53,666 հազ. դրամ՝ գերաձախսը կազմել է 7,926.0 հազ. դրամ:

«Գազատուրբինի մասերի ձեռք բերում «Ջեներալ էլեկտրիկ» ընկերությունից» (Գինը 355,725.2 հազ. դրամ) և «Շոգետուրբինի մասերի ձեռք բերում «Ֆուջի» ընկերությունից» (Գինը 207,898.7 հազ. դրամ) մեկ անձից գնման գործընթացներում՝

ա) Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ «Գնման առարկայի բնութագրերը» 1-ին և 3-րդ կետի պահանջները, Ընկերությունը գնվող

աշխատանքների (ծառայությունների) համար պահանջվող տեխնիկական բնութագրեր չի ներկայացրել «Ֆուջի» ընկերությանը:

բ) Մատուցած աշխատանքների (ծառայությունների) համար երկկողմանի հաստատված նախահաշիվներ գնահաշվարկներ գոյություն չունեն: Գնումների պլանում բացակայում են ապրանքների ձեռք բերման միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները, իսկ փաստացի ձեռքբերումների գները ներկայացված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ ապրանքների գների:

«ՀՇԳՑ թիվ 1 էներգորընկի 2018թ.-ի օգոստոս- սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում մետաղի ստուգման ծառայությունների մատուցում» (Պայմանագրի գինը 7,329.4 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգով հաղթող ճանաչված

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական հաշվետվության» մեջ Արձանագրություն N4/1-ով և Արձանագրություն N5 հաստատվել են անթույլատրելի արատների չհայտնաբերման տեսողական- չափողական զննման եզրակացությունները, սակայն համադրման ակտի նախատեսված աշխատանքների «փաստացի քանակներ» մասում նման աշխատանքներ նախատեսված չեն եղել: Առկա է անհամապատասխանություն փաստացի կատարված աշխատանքների և կազմված փաստաթղթերի միջև:

«Գույքի գնահատման ծառայության մատուցում» (Պայմանագրի գինը 9,890.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հաղթող ճանաչված «Արթին Էնթերպրայս» ՍՊԸ-ի հետ 27.04.2018թ. կնքված N ԵՐՁԷԿ- ԳՀԾՁԲ 11/18 ծածկագրով պայմանագիր, որում

ա) Հստակ չի նշվում գնման անհրաժեշտությունը: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի այն է՝ «Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը». պահանջ:

բ) Համեմատության համար անհրաժեշտ է անդրադառնալ 2017 թվականին գույքի գնահատման ծառայության ձեռք բերմանը, որի պայմանագիրը կնքվել է 13.10.2017թ.-ին, այսինքն՝ ավելի քան 5 ամիս առաջ և պայմանագրի գինը կազմել է՝ 19,900.0 հազ. դրամ: Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով սահմանվել է 2018թ-ի տեխնիկական բնութագրով սահմանված գրեթե նույն նպատակը՝ «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և Միջազգային Ստանդարտների Կոմիտեին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու նպատակով՝ 01.12.2017թ. դրությամբ», իսկ ծառայության մատուցումը սահմանվել է այսպես՝ «Կազմակերպության հիմնական միջոցների իրական և մնացորդային արժեքների, ինչպես նաև օտարվող պաշարների վերագնահատման ծառայությունների

մատուցում»: Աշխատանքների արդյունքի ամփոփման 18 անուն գործողություններից (2017թ.-ին 17 անուն գործողություն է սահմանված) 13 անունը նույն է ինչ որ 2017 թվականինը:

«ՀՀ-ի և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև 2015թ. ապրիլի 08-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» 8495-AM և 2016թ. մայիսի 12-ին ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի, ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի Բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵՐՋԷԿ-ի համապատասխանության /իրագործելիության ապահովման աուստրսինգի ծառայությունների ձեռք բերում»:(Պայմանագրի գինը 31,800.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հաղթող ճանաչված «ԴԻ ԶԻ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ 08.08.2018թ. կնքված N ԵՐՋԷԿ- ԳՀԾՁԲ 69/18 ծածկագրով պայմանագիր: Համեմատության համար անհրաժեշտ է նշել որ նմանատիպ ծառայությունների մատուցման համար 2017թ. կնքված պայմանագրի գումարը կազմել է՝ 99,900.0 հազ. դրամ: Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը համեմատվել են և պարզվել է, որ 9 կետից բաղկացած «Հիմնական պահանջների նկարագրությունը» բաժնում թվով 5 կետեր կրկնվում են, իսկ 8 կետից բաղկացած «Գնման առարկայի նկարագրերը» բաժնում թվով 3 կետեր նույնպես կրկնվում են: Արդյունքում, տարբեր տարիների մատուցված ծրագրի հաշվապահական աուստրսինգի ծառայությունները կատարվել են տարբեր գներով:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, 2017 թվականի և 2018 թվականի ընթացքում ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը, բոլոր էական առումներով համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Լևոն Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

27 դեկտեմբերի, 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Հաստատված դրույքաչափերից պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017թ-ի ընթացքում Ընկերության թվով 52 և 2018թ-ի թվով 25 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքվել են մինչև 2017թ. և 2018թ. հաստիքացուցակի հաստատումը, նշված աշխատակիցների փաստացի աշխատավարձերի դրույքաչափերը, ըստ հաստիքացուցակի խորհրդի հաստատման են ներկայացվել բարձր դրույքաչափերով և հաստատումից հետո աշխատանքային պայմանագրերը չեն փոփոխվել: 2017թ-ի ընթացքում թվով 7 և 2018թ թվով 3 աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը կնքվել են հաստատված հաստիքացուցակով նախատեսված դրույքաչափերից պակաս:

<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաստիքացուցակի հաստատումը խորհրդի բացառիկ իրավասությունն է և սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը, եթե կանոնադրությամբ նման դրույթ նախատեսված է: Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջներով նշված դրույթը չի սահմանվել, այսինքն՝ կանոնադրությամբ խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

2017-2018թթ ընթացքում 87 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին պակաս են հաշվարկել և վճարել 21,218.3 հազ. դրամ աշխատավարձ:

Հեղևանք

Առկա է անհամապատասխանություն <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի և Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջներ հետ, 2017-2018թթ-ին ընթացքում թվով 10 աշխատակիցների հետ կնքել է հաստատված հաստիքացուցակների դրույքաչափերից պակաս պայմանագրեր, իսկ

թվով 77 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքված են եղել հաստատված դրույքաչափերից պակաս մինչև 2017թ և 2018թ-ի հաստիքացուցակների հաստատումը, հաշվեքննության ժամանակահատվածում փոփոխության չեն ենթարկվել, արդյունքում 2017-2018թթ ընթացքում թվով 87 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին պակաս են հաշվարկել և վճարել 21,218.3 **հազ. դրամ** /14,487.6+6,730.7/:

Առաջարկ

ԵրՋԷԿ-ին Աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի և ընկերության կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. ընթացքում Ընկերության համապատասխանաբար 4 և 6 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքվել են մինչև 2017թ. և 2018թ. հաստիքացուցակի հաստատումը, նշված աշխատակիցների փաստացի աշխատավարձերի դրույքաչափերը ըստ հաստիքացուցակի խորհրդի հաստատման են ներկայացվել ցածր դրույքաչափերով և հաստատումից հետո աշխատանքային պայմանագրերը չեն փոփոխվել: 2017թ-ի ընթացքում թվով 4 և 2018թ թվով 7 աշխատակիցների աշխատանքային պայմանագրերը կնքվել են հաստատված հաստիքացուցակով նախատեսված դրույքաչափերից ավելի:

<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հաստիքացուցակի հաստատումը խորհրդի բացառիկ իրավասությունն է և սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը, եթե կանոնադրությամբ նման դրույթ նախատեսված է: Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջներով նշված դրույթը չի սահմանվել, այսինքն՝ կանոնադրությամբ խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Հեղևանք

2017-2018թթ ընթացքում թվով 21 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին ավելին են հաշվարկել և վճարել 7,476.9 հազ. դրամ /4,537.5+2,939.4/ աշխատավարձ:

Ընկերությունը խախտելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի և Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջները, 2017-2018թթ-ին ընթացքում թվով 10 աշխատակիցների հետ կնքել են հաստատված հաստիքացուցակների դրույքաչափերից ավելի պայմանագրեր, իսկ թվով 11 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքված են եղել մինչև 2017թ և 2018թ-ի հաստիքացուցակների հաստատումը՝ դրույքաչափերից ավելի, հաշվեքննության ժամանակահատվածում փոփոխության չեն ենթարկվել, արդյունքում 2017-2018թթ ընթացքում

թվով 21 աշխատակիցների հետ հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի համապատասխան, աշխատակիցներին ավելին են հաշվարկել և վճարել 7,476.9 **հազ. դրամ**/4,537.5+2,939.4/ աշխատավարձ:

Առաջարկ

Աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի և ընկերության կանոնադրության պահանջներին համապատասխան:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

Հաստատված դրույքաչափերից պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ՝ և «5. Հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ՝ կետերում արձանագրումների մասին

Արձանագրության 4-րդ և 5-րդ կետերում արձանագրվել են, որ Ընկերությունում առկա են աշխատողներ, որոնց հետ աշխատանքային պայմանագրերը կնքվել են Ընկերության խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակով նախատեսված դրույքաչափերից պակաս կամ ավել գումարով:

Ա) Նշված հանգամանքների առնչությամբ արձանագրության «Արդյունքում» բաժնում արված հետևությունը, այն մասին, որ Ընկերությունը խախտել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի և Ընկերության կանոնադրության 13.4.2 կետի պահանջները, սխալ է և ոչ իրավաչափ: Ավելին՝ արձանագրված փաստերի և արված հետևության միջև ոչ մի իրավական կապ առկա չէ:

Ասվածը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով՝

1. ՀՀ որևէ իրավական ակտով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով նախատեսված «հաստիքացուցակ» հասկացությունը սահմանված չէ, չկա որևէ իրավական նորմ, որով առկա լինեն «հաստիքացուցակ»-ներին ներկայացվող պահանջներ: Հետևաբար՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսդրության իրավակարգավորումները, կարելի է պնդել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով նախատեսված «հաստիքացուցակ»-ը բացառապես կարող է վերաբերվել կազմակերպության պլանավորված աշխատատեղերին, որն էլ կարող է արտահայտվել պաշտոնների անվանումներով և քանակներով:

Ի հաստատումն վերոնշյալի, ելնելով ՀՀ օրենսդրությունում կիրառվող «հաստիքացուցակ» հասկացության իրավական որոշակիության և դրա միատեսակ կիրառության ապահովումից, կարող է դիտարկվել օրինակ պետական կառավարման մարմինների հաստիքացուցակները, օրինակ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնների անվանումները և դրանց քանակը արտացոլող փաստաթուղթը ևս կոչվում է «հաստիքացուցակ», հղում՝ <http://www.mtad.am/files/docs/2051.pdf>:

2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն Տնօրենը կնքում է աշխատանքային պայմանագրեր, իսկ աշխատանքային պայմանագրերի կնքումը և դրանց շրջանակներում աշխատողների վարձատրության կարգը, պայմանները, այդ թվում՝ չափերը, կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: ՀՀ աշխատանքային օրենսդրությունում առկա են բազմաթիվ իրավակարգավորումներ, ըստ որոնց՝ արձանագրությունում նշված հանգամանքները աշխատողի և Ընկերության /Գործատու/ միջև աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում են, որոնք կարգավորվում են առաջին հերթին ՀՀ աշխատանքային օրենսգրքով /այսուհետ ՀՀ ԱՕ/, և ոչ մի դեպքում չեն կարող հանգեցնել Ընկերության կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ

հողվածի 1-ին մասի պահանջների խախտման:

Ի հաստատումն ասվածի կարելի է դիտարկել օրինակ ՀՀ ԱՕ հետևյալ իրավանորմերը՝

ա) ՀՀ ԱՕ 13-րդ հոդվածի համաձայն՝

Աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

բ) ՀՀ ԱՕ 83-րդ հոդվածի համաձայն՝

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին փրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

գ) ՀՀ ԱՕ 4-րդ հոդվածի համաձայն աշխատանքային օրենսդրությամբ են սահմանվում աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները. ,

դ) ԱՕ 55, 57-րդ և 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Կոլեկտիվ պայմանագրով են սահմանվում աշխատանքի վարձատրության պայմանները, աշխատանքի վարձատրության կարգավորման մեխանիզմները՝ հաշվի առնելով սղածի մակարդակը և գների աճը.

ե) ԱՕ 105-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում, որի մասին գործատուն գրավոր ձևով պետք է ծանուցի աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչև նոր պայմանների ուժի մեջ մտնելը:

3. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ 1-ին մասի իգ) կետի համաձայն խորհուրդը հաստիքացուցակից բացի հաստատում է նաև ամենամյա ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը: Խորհրդի կողմից Ընկերության ծախսերի նախահաշիվով նախատեսված է աշխատողների վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր ֆոնդ: Ընկերության ծախսերի նախահաշիվի և հաստիքացուցակի համադրումից ակնհայտ է, որ աշխատողների վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր ֆոնդի հաշվարկը արտացոլված է հաստիքացուցակում /ընդ որում՝ Ընկերության 2017թ. և 2018թ. հաստիքացուցակներում տեղ են գտել ոչ միայն հաստիքային ամսական դրույքաչափերի, այլև լրացուցիչ վարձատրությանն ուղղվող միջոցների վերաբերյալ տեղեկություններ/: Այսինքն՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների վերաբերյալ հաստիքացուցակում առկա տեղեկատվությունը կրում է հաշվարկային բնույթ՝ արտահայտելով աշխատանքի վարձատրությանն ուղղվող պլանավորված միջոցների հաշվարկները, որոնք ոչ մի դեպքում չեն կարող ունենալ պարտադրող ուժ և/կամ գերակայել ՀՀ ԱՕ նորմերին:

4. Եթե նույնիսկ դիտարկենք, որ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը պետք է պարտադիր արտացոլվեն «հաստիքացուցակ»-ում և պարտադիր կիրառվեն, ապա պետք է ընդունենք նաև, որ դրանք ակնհայտորեն հանդիսանում են ծախսերի նախահաշիվի տարր, քանի որ աշխատանքի վարձատրությանն

ուղղվող միջոցների հիմնավորումն են: Հետևաբար՝ հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ 1-ին մասի իգ) կետը, համաձայն որի՝ խորհուրդը հաստատում է նաև ամենամյա ծախսերի նախահաշվի կատարողականը, ապա պարզ է դառնում, որ բաժնետիրական ընկերություններում ծախսերի նախահաշվից շեղումների գնահատման իրավասությունը վերապահված է խորհրդին, իսկ Ընկերության խորհուրդը ժամանակին քննարկել և հաստատել է Ընկերության տարեկան ծախսերի նախահաշիվների կատարողականները:

Բ) Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ հիմնավորումների համաձայն Արձանագրության 4-րդ և 5-րդ կետերով Ընկերությանը վերագրված խախտումը ամբողջությամբ անընդունելի է, այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել նաև, որ արձանագրությունում առկա են ևս մի շարք իրավական և փաստական տվյալների հետ անհամապատասխանություններ, այսպես՝

1. “5. Հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ” կետում նշված է, որ “.....իսկ թվով 11 աշխատակիցների աշխատանքային պայմանագրեր, որոնք կնքված են եղել մինչև 2017թ. և 2018թ. հաստիքացուցակների հաստատումը՝ դրույքաչափերից ավելի, հաշվեքննության ընթացքում փոփոխության չեն ենթարկվել”: Նշված աշխատակիցներին հատկացված վարձատրությունը ևս դիտարկվել է որպես հաստատված դրույքաչափերից ավել տրված: Այն հանգամանքը, որ նշված 11 աշխատակիցների պայմանագրերով նախատեսված աշխատավարձերը առանց աշխատողի համաձայնության, միայն Գործատուի ցանկությամբ չէին կարող նվազեցվել, նախատեսված է ՀՀ ԱՕ 105-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ «Առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում»:

2. Որպես հաստատված դրույքաչափերից ավելի կնքված աշխատանքային պայմանագրերին համապատասխան աշխատավարձերի՝ արձանագրությանը կից ներկայացված հավելվածներում արտացոլված հաշվարկներում ևս տեղ են գտել մի շարք անճշտություններ, օրինակ՝ առանձին աշխատողների մասով հաշվարկներում արտացոլվել են ոչ թե պաշտոնային դրույքաչափերը, այլ համախառն վարձատրությունը: Հաշվարկների մանրամասներին չենք անդրադառնում, դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

3. Հավելենք նաև, որ «դրույքաչափերից ավել կամ պակաս կնքված աշխատանքային պայմանագրերի» գործող դրույքները հաստատվել են 2018-2019թթ.-ին հաստիքացուցակներով:

3. Աշխատակիցներին վճարված պարգևատրումների վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017թ.-ի ընթացքում ընկերության աշխատակիցների համար հաշվարկվել և վճարվել են 180,332.1 հազ. դրամ /64,731.5+115,600.6/ պարգևատրում, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 26% և 2018թ.-ի ընթացքում հաշվարկվել և վճարվել են 207,287.9 հազ. դրամ /84,489.1+122,798.8/ աշխատավարձ, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 27.4%:

2017-2018թթ. ընթացքում փաստացի հաշվարկված և վճարված աշխատավարձերը չեն գերազանցել նախատեսված աշխատավարձի ֆոնդերը: Հաշվեքննության ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքները, ընդհանուր առմամբ, չեն զբաղեցվել, օրինակ՝ 2018թ-ին հաստիքացուցակով հաշվապահություն վարողների համար

նախատեսվել են հաստիքներ, սակայն, հաշվապահական գործերի վարման համար հայտարարված է եղել մրցույթ և հաղթող ճանաչված կազմակերպությունը մատուցել է հաշվապահական ծառայություն և այլն:

2017թ-ին հաստիքացուցակով հաստատվել է 54 թափուր հաստիք և 2018թ-ի հաստիքացուցակով 34 թափուր հաստիք:

Թափուր հաստիքների համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի գումարները ուղղվել են աշխատակիցների պարգևատրման և աշխատավարձի հոդվածով ծախսվող այլ վճարումների համար:

Հերևանք

2017թ.-ի ընթացքում ընկերության աշխատակիցների համար հաշվարկվել և վճարվել են 180,332.1 հազ. դրամ /64,731.5+115,600.6/ պարգևատրում, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 26% և 2018թ.-ի ընթացքում հաշվարկվել և վճարվել են 207,287.9 հազ. դրամ /84,489.1+122,798.8/ աշխատավարձ, որը կազմում ընդհանուր աշխատավարձի ֆոնդի 27.4%:

Սակագնի ձևավորման մեջ ներառվող աշխատավարձի ֆոնդի գումարներից, թափուր հաստիքների համար նախատեսված գումարների հաշվին 2017թ-ին ընթացքում աշխատողների համար հաշվարկվել և վճարվել են 64,731.5 **հազ. դրամ** և 84,489.1 **հազ. դրամ** պարգևատրում, այն դեպքում երբ հաստատված հաստիքացուցակների համաձայն միավոր աշխատավարձի մեջ ի սկզբանե ներառվել են աշխատողների հիմնական աշխատավարձը և աշխատողների համար նախատեսված

ամենամսյա պարգևատրումները՝ հիմնական աշխատավարձի 5%-ից մինչև 45%-ի չափով: 2017-2018թթ. այն կազմում է համապատասխանաբար 115,600.6 հազ.դրամ և 122,798.8 հազ.դրամ, ընդամենը 238,399.4 հազ.դրամ: Աշխատակիցների հետ ի սկզբանե աշխատանքային պայմանագրերը կնքվել են նույն տրամաբանությամբ՝ պայմանագրի մեջ նշելով նաև պարգևատրման տոկոսի չափով գումարը: Հաստիքացուցակում կամ աշխատանքային պայմանագրում տոկոսային հարաբերությամբ պարգևատրման գումարների ներառումը <<<< աշխատանքային օրենսգրքի>> խախտում է, քանի որ <<<< աշխատանքային օրենսգրքի>> 178-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

Առաջարկ

Ընկերության հաստիքացուցակը հաստատել և աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել <<<< աշխատանքային օրենսգրքի>> պահանջներին համապատասխան:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

Աշխատակիցներին վճարված պարգևատրումների վերաբերյալ՝ կեղում արձանագրումների մասին

Արձանագրության 6-րդ կետում արձանագրված փաստերի շարքում արձանագրվել է նաև հաստիքացուցակում կամ աշխատանքային պայմանագրում տոկոսային հարաբերությամբ պարգևատրման գումարների ներառումը, որը դիտարկվել է որպես << աշխատանքային օրենսգրքի խախտում, քանի որ << աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է»:

Նախ՝ Ընկերության աշխատողներին ամսական պարգևատրումները առաջին հերթին նախատեսված են Ընկերության կոլեկտիվ պայմանագրով, որտեղ ամրագրված են նշված պարգևատրումների հատկացմանը վերաբերվող, << աշխատանքային օրենսգրքին չհակասող բոլոր պայմանները և պահանջները: Արձանագրությունում նշված հանգամանքին անդրադարձ չի կատարվել:

Երկրորդ՝ Արձանագրության մեջ որպես խախտման հիմք հղում է կատարվում << աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ կետին, մինչդեռ՝ հենց նույն նորմով է նախատեսված, որ պարգևատրումները կարող են լինել ամսական պարբերականությամբ, պարգևատրումները կարող են լինել աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված: Իսկ ինչ վերաբերվում է նշված պարգևատրումները Ընկերության հաստիքացուցակում նշված լինելուն, ապա այս հանգամանքի մասին մանրամասն նշված է սույն առարկության Ա) բաժնում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ << էներգետիկ ոլորտի կազմակերպություններում աշխատողների վարձատրության նման մեխանիզմ միշտ առկա է եղել:

4. Հին կայանի աշխատակիցների վերաբերյալ

Անհամապատասխանություն

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի կառուցումը սկսվել է 2008թ. և ավարտվել ու շահագործման է հանձնվել 2010թ.: Նոր կայանի շահագործումով հին կայանը չի գործել, սակայն Ընկերության 2017թ. և 2018թ-ի հաստատված հաստիքացուցակներով հին կայանի պահպանման համար նախատեսվել է համապատասխանաբար 60, իսկ փաստացի պահվել է 50 հաստիքային միավոր, 2018թ.՝ նախատեսվել է 46, իսկ փաստացի պահվել է 45 հաստիքային միավոր: Նշված հաստիքներով իրականացվում է կայանի սարքավորումների պահպանության հետ կապված որոշակի պարբերականությամբ աշխատանքներ:

Հետևանք

Հին կայանի պահպանման համար հաստատված հաստիքացուցակով 2017թ-ին նախատեսվել է ամսական 10,644.3 հազ. դրամ և 2018թ-ին՝ 7,805.2 հազ. դրամ աշխատավարձ: 2017թ-ին հին կայանի պահպանման համար աշխատակիցներին հաշվարկվել է 97,723.9 հազ. դրամ աշխատավարձ, 2018թ-ին 102,888.3 հազ. դրամ աշխատավարձ, ընդամենը հին կայանի պահպանման համար 2017-2018թթ. հաշվարկվել է 200,612.2 հազ. դրամ աշխատավարձ:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ հին կայանի պահպանման համար կատարվող ծախսերը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագրի վերաբերյալ

5. <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և ABB AB, Substations և Cobra Instalaciones Y Servicios S.A. կոնսորցիումի միջև կնքված պայմանագրի ժամկետների վերաբերյալ

Անհամապատասխանություն

<Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և ABB AB, Substations և Cobra Instalaciones Y Servicios S.A. կոնսորցիումի հետ 2016թ. հոկտեմբերի 14-ին կնքվել է համապատասխան կապալի պայմանագիր, սակայն կառուցման աշխատանքները սկսվել են 2017թ. հունվարից՝ ֆինանսավորումը ուշացնելու հետևանքով /առաջին կանխավճարը փոխանցվել է 2016թ. դեկտեմբերին/: Գործողության ժամկետը սահմանվել է 17 ամիս, որը հետագայում երկարաձգվել է մինչև 20 ամիս/ և կառուցման ավարտ է սահմանվել 16.09.2018թ.: Սակայն երկարաձգումից հետո նույնպես աշխատանքները չեն ավարտվել: Նշենք նաև, որ հնարավոր ուշացումների վերաբերյալ բազմիցս անգամ իր ամսական և եռամսյակային հաշվետվություններում պատվիրատուին տեղեկացրել է նաև ծրագրի խորհրդատու հանդիսացող CESI S.p.A. և INCICO S.p.A. համատեղ ձեռնարկությունը, սակայն նրա մատնանշած խնդիրների լուծումները իրականացվել են շատ դանդաղ տեմպերով:

Հետևանք

Արդյունքում մինչև 31.12.2018թ. չեն ստորագրվել աշխատանքների կատարման վերջնական արձանագրությունները, ինչպես նաև չեն հաշվարկվել աշխատանքների ուշացումների համար պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների գումարները:

Առաջարկ

Ձեռնարկել համապատասխան միջոցներ աշխատանքների կատարման վերջնական արձանագրությունների ստորագրման, ինչպես նաև աշխատանքների ուշացումների հետևանքով տույժերի և տուգանքների հաշվարկման ուղղությամբ:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

«Պայմանագրի ժամկետներ վերաբերյալ» արձանագրումների մասին՝

Արձանագրության մեջ նշված՝ սահմանված ժամկետում աշխատանքները չավարտելու վերաբերյալ հայտնում ենք, որ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված իր բոլոր լծակները և միջոցները օգտագործել է աշխատանքների դանդաղ տեմպը և ծագած խնդիրները արագ լուծելու համար և, քանի որ Պայմանագրով որպես պատժամիջոց սահմանված է միայն աշխատանքների ամբողջական ժամկետից ուշացման դիմաց նախապես գնահատված վնասների փոխհատուցման /տույժերի/ կիրառում, ապա Ընկերությունը սահմանված ժամկետներում ծանուցել է Կապալառուին պայմանագրով սահմանված աշխատանքների ուշացման համար նախապես գնահատված վնասների փոխհատուցման/ տույժերի կիրառման վերաբերյալ (գրությունը ներկայացվել է հաշվեքննության ընթացքում, առկա են նաև Ընկերության բազմաթիվ գրություններ սույն հարցի վերաբերյալ): Հարկ է նշել, որ Ընկերությունը բոլոր միջոցները ձեռնարկել է որպեսզի Երևանի ՀՇԳՑ էլեկտրակայանի կապիտալ վերանորոգման աշխատանքները և ենթակայանի հիմնական մասի կառուցման աշխատանքները համատեղ ավարտվեն: Արդյունքում, չնայած 16/09/2018թ դրությամբ ամբողջ աշխատանքները ավարտված չէին, այնուամենայնիվ 2018թ սեպտեմբերի 28-ի դրությամբ ենթակայանի 110/35կՎ մասը ավարտված էր, և Էներգաբլոկի համակարգին միացումը և հոսանքի տեղափոխությունը կատարվել է նոր 110կՎ ենթակայանով: Ինչ վերաբերում է տույժերի կիրառման հարցին, հարկ է նշել, որ հարցը ներկայացվել էր Ծրագրի կառավարման խորհրդի քննարկմանը և հաստատմանը դեռևս 2018թ. դեկտեմբերի 21-ին, Կառավարման խորհուրդը մանրամասն ուսումնասիրել էր տույժերի հաշվարկի մեթոդիկայի և չափի հարցը (առկա է մի շարք անկախ իրավաբանների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության իրավական դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ): Այս հարցը լուծված է 2019թ ընթացքում:

6. Ապրանքների մատակարարման և աշխատանքների ընդունման հանձնման վերաբերյալ

Անհամապատասխանություն

<Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և ծրագրի խորհրդատու հանդիսացող CESI S.p.A. և INCICO S.p.A. համատեղ ձեռնարկություն և Ameria CJSC (ենթախորհրդատու) միջև կնքված պայմանագրի համաձայն, կապալառուի հետ ստորագրվող Ծրագրին առնչվող փաստաթղթերը պետք է նախապես համաձայնեցվեն Ծրագրի խորհրդատուի հետ, ինչպես նաև խորհրդատուի կողմից պետք է հաստատվեն կապալառուի և <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի միջև ընդունման-հանձնման բոլոր ակտերը: Մինչդեռ 2017թ. մինչև 2018թ. ապրիլ ամիսն ստորագրված ընդունման-հանձնման ակտերում բացակայում է խորհրդատուի հավաստումը:

Նախքան բեռնափոխադրումը, մատակարարվող որոշ սարքավորումները /ուժային տրանսֆորմատորներ, ռելեական պաշտպանություն և ավտոմատիկա, անջատիչների և

բաժանիչներ, հոսանքի և լարման տրանսֆորմատորներ/ պետք է գործարանում առանձին անցնեն պլանային փորձարկումներ, որոնց պետք է մասնակցեն պատվիրատուն (2 անձ) և ինժեները/խորհրդատուն (1 անձ) յուրաքանչյուր գործարանային փորձարկումներին: Սակայն 7 փորձարկումներից խորհրդատուն մասնակցել է միայն 3-ին:

Հերևանք

Առկա է անհամապատասխանություն <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի և CESI S.p.A. և INCICO S.p.A. համատեղ ձեռնարկություն և Ameria CJSC (ենթախորհրդատու) միջև կնքված պայմանագրի դրույթների նկատմամբ:

Առաջարկ

Հետագայում նմանատիպ ծրագրեր իրականացնելու ընթացքում առաջնորդվել պայմանագրով նախատեսված դրույթներով:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

«Ապրանքների մատակարարման և աշխատանքների ընդունման-հանձնման վերաբերյալ» արձանագրումների մասին՝

Հայտնում ենք, որ Խորհրդատուին վճարումները կատարվել են փաստացի կատարված աշխատաժամանակի համար, ավելին՝ հանձնման-ընդունման ակտերը ունեն աճողական բնույթ և Խորհրդատու կողմից ստորագրված ակտերը իրենց մեջ ներառում են նաև նախորդ ժամկետում կատարված և ընդունված աշխատանքները:

7. Ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ

Անհամապատասխանություն

2015թ. ապրիլին <Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի պատվերով Tractebel Engineering SA, the Consultant ընկերությունը կազմել և ներկայացրել է նոր էլեկտրակայանի կառուցման նպատակայնության և ուսումնասիրության փաստաթուղթ, որի համաձայն տվյալ ծրագրի իրականացման համար պլանավորվել է 29,622.9 մլն. ԱՄՆ դոլար, առանց համաֆինանսավորման գումարի /տվյալ հաշվարկի մեջ այն կկազմեր ևս 32%, որը հիմք է հանդիսացել վարկային միջոցների ներգրավման համար: Սակայն հետագայում նշված գումարները անհամեմատ նվազել են: Համեմատության համար նշենք, որ <Երևանի ՋԷԿ> ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, էլեկտրակայանի կառուցման համար կանխատեսվող ամբողջական ծախսերը կկազմեն շուրջ 22.5 մլն. ԱՄՆ դոլար, ներառյալ ՀՀ կառավարության կողմից տրված համաֆինանսավորման գումարները:

Հերևանք

Հաշվարկների, աշխատանքների կազմակերպման և ոչ ճիշտ պլանավորման հետևանքով ծրագրի իրականացման համար ներգրավվել են ավելի շատ միջոցներ, քան պահանջվում էր և որի արդյունքում, համաձայն ենթավարկային պայմանագրի 3-րդ կետի, վարկառուն չօգտագործված վարկի դիմաց վճարել է պարտավճար տարեկան 0.25 տոկոսի չափով՝ 2015թ. հունիսից մինչև 2016թ. դեկտեմբեր ամիսը շուրջ 118.0 հազ. ԱՄՆ դոլար, 01.01.2017-31.12.2018թթ.՝ 74,121.4 ԱՄՆ դոլար: Նշենք նաև, որ ծրագրի ավարտին մնացած խնայված գումարների համար՝ շուրջ 5.5 մլն ԱՄՆ դոլար, նույն պարտավճարները շարունակվում են հաշվարկվել և վճարվել:

Առաջարկ

Ձեռնարկել համապատասխան միջոցներ ծրագրի ավարտին խնայված շուրջ 5.5 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ չեղարկման ուղղությամբ:

«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

«Ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ» արձանագրումների մասին՝

Արձանագրության մեջ նշված հանգամանքների առնչությամբ հայտնում ենք, որ Ընկերությունը իր իրավասության շրջանակներում՝ Ծրագրի ընթացքի վերաբերյալ բոլոր նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, տեղեկատվությունը ժամանակին տրամադրել է համապատասխան իրավասու մարմիններին, ավելին՝ Ընկերությունը նույնիսկ 2019թ. ապրիլի 23-ին գրությամբ դիմել է նշված խնայողությունները վերաբաշխելու և Երևանի ԶԷԿ-ի վարկի մասը նվազեցնելու համար (գրությունը տրամադրվել է հաշվեքննության ընթացքում), ինչպես նաև ՀՀ 2019-2021 թվականների համար հաստատված ՄԺԾ-ի հայտը:

8.«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն » ՓԲԸ-ի կողմից տրանսպորտային միջոցների վրա կատարված վերանորոգման ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

<<Երևանի ԶԷԿ>> ՓԲԸ-ում 2017 թ-ին նախորդ տարվա բենզինի մնացորդը կազմում է 4381 լիտր, 2017 թ-ի համար ձեռք է բերվել 117,700 լիտր բենզին 34,315.9 հազ. դրամի. դիզելային վառելիք 17,100 լիտր 5,504.5 հազ.դրամի սեղմած գազ 26000լսմ 5,200.0 հազ.դրամի: 2018թ-ին 27,275.1 հազ. դրամով ձեռք է բերվել 78,000 լիտր բենզին նախորդ տարվա մնացորդը կազմում է 28,686 լիտր բենզին, ձեռք է բերվել 15000 լիտր դիզ. վառելիք, որի նախորդ տարվա մնացորդն է 6,946 լիտր 2,232.886 հազ. դրամի: Ձեռք է բերվել նաև 10,000 լսմ սեղմված գազ 2,000.0 հազ դրամի, որի նախորդ տարվա մնացորդն է 3000լսմ, որը կազմում է 600.0 հազ.դրամ: 2017թ-ին փաստացի թվով 26 բենզինով շահագործվող մեքենաների վազքը, ըստ ուղեգրերի կազմում է 476,508 կմ. իսկ 2018թ-ին թվով 30 միավոր բենզինով շահագործվող մեքենաների վազքը, ըստ ամսական տրված հաշվետվությունների և ուղեգրերի կազմում է 419,357 կմ: Հաշվեքննությամբ պարզվեց, որ՝ <<Երևանի ԶԷԿ>> ՓԲԸ-ում 2017-2018թթ-ին վառելիքի բաշխումը կատարվել է կտրոններով, որը տրվել է վարորդներին 15-օրը մեկ, մեկ ամսվա օգտագործման համար՝ երկու անգամ:

Սակայն ավտոպարկի կարգավարի կողմից տարվել է հաշվառում գրանցամատյանում, որը տնօրինության կողմից կնքված և համարակալված չէր: Որոշ ավտոմեքենաների վազքը 12-ամիսների ընթացքում մոտավոր նույն թվերն են կազմում և ամսեկան ստացած վառելիքի չափը, կտրոնների բաշխման պատասխանատուն առաջնորդվել է նախորդ ամիսներին փաստացի տրված վառելիքի կտրոնների քանակով: Ստորաբաժանման պատասխանատու անձանց կողմից երթուղային ուղեգրերը ամբողջովին լրացվել են խորհրդային ժամանակների ուղեգրերով: Ավտոպարկի պատասխանատու անձանց կողմից չի կազմվել հաշվառման գրանցամատյաններ. Թվով 33 միավոր տեխնիկայի վերանորոգման համար 2017թ-ին ծախսվել է 5,997.2 հազ.դրամ. իսկ 2018թ-ին ավտոտեխսպասարկման գումարը կազմում է 5,651,2 հազ.դրամ: 2017-2018թթ-ին ընկերության մեքենաների վերանորոգման համար պատասխանատու անձանց կողմից չեն կազմվել թերությունների ակտ և չեն ներկայացվել զեկուցագրեր: Օտարման ենթակա մեքենաների վերաբերյալ նախապես չի կազմվել գույքագրման հանձնաժողով, որով պետք է գույքագրվեր և արձանագրվեր օտարման ենթակա մեքենաները, որոնք շահագործման պիտանի չեն:

Հեղևանք

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թ.-ի փետրվարի 1-ի թիվ 37-ն հրամանի, մասնավորապես հավելված 1-ի 48. Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման ավտոբուսի երթուղային թերթիկ (ձև ԾԽ-6). և 49. Բեռնատար ավտոմեքենայի երթուղային թերթիկ (ձև ԾԽ-7), ինչպես նաև հավելված 2-ով հաստատված գրանցամատյանների օրինակելի ձևերի պահանջները:

Առաջարկ

Առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 37-ն հրամանով:

Ընկերությունը 2017թ.-ին կատարել է շուրջ 301,738,0 հազ. դրամի մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումներ, մասնավորապես՝ արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, որով և չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, ինչպես նաև չեն կնքվել պայմանագրեր, որը հակասում է 22.12.2010թ. «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: 2018թ.-ին նույնպես 794,168.79 հազ. դրամի գնումները կատարվել են մեկ անձից և առանց համապատասխան պայմանագրեր կնքելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 71-րդ կետի պահանջների հետ:

9. Արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Ընկերությունը 2017թ-ին կատարել է շուրջ 301,738,0 հազ. դրամի մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումներ, մասնավորապես՝ արտասահմանյան գործընկերներից

իրականացված գնումները, որով և չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ այն է «Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում», նաև 23-րդ հոդվածի՝ «Մեկ անձից գնում կատարելու պայմանները» պահանջները: Ինչպես նաև չեն կնքվել պայմանագրեր, որը հակասում է 22.12.2010 թվականի «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Բանակցային ընթացակարգի դեպքում պատվիրատուն պայմանագրի պայմանների շուրջ բանակցում է նախապես որակավորված մասնակիցների հետ և կնքում պայմանագիր» պահանջներին: Արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, ըստ կազմակերպությունների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումներ 2017թ.

Աղյուսակ-1

| h/h | Անվանումը | Գնման ձևը (ընթացակարգ) | Ընդամենը ծախսերը (հազ. դրամ), այդ թվով ԱԱՀ | Ընկերության անվանումը |
|-----|--|---------------------------|--|--|
| 1 | TRAC 109.15R Nalco | ՄԱ | 9,339 | Gorex Analyth GmbH |
| 2 | FerroZine Eisenreagenz, 100/pkg | ԲԸԱՀ | 194 | Gorex Analith GmbH |
| 3 | Կոռոզիոն ինհիբիտոր Nalco23212 | ՄԱ | 104,772 | Hungarian Trading Company KFT |
| 4 | Քիմիկատներ | ԲԸԱՀ | 89,169 | Hungarian Trading Company KFT |
| 5 | Spare Part set FK 12.5 910470 | ՄԱ | 1,279 | ProMinent GmbH |
| 6 | SEIBOLD Wasser - Analysatorenfabrik GmbH անալիզատորի ռեագենտներ և պահեստամասեր | ԲԸԱՀ | 1,991 | SEIBOLD Wasse-Analysatorenfabrik GmbH |
| 7 | անալիզատորի համար ռեակցիոն բլոկի վերանորոգման պահեստամաս, | ԲԸԱՀ | 7,143 | MTR Engineering OU |
| 8 | Spare Part set FK 0215-2/0413-02/0713-2PVT 1023112 | ՄԱ | 1,051 | Prominent GmbH |
| 9 | Ֆիլտեր գազատորբինի Ներթոլման համակարգի G4 տիպի | ԲԸԱՀ | 4,620 | Mann+Hummel Vokes Air GmbH & Co. OHG |
| 10 | Ֆիլտեր գազատորբինի Ներթոլման համակարգի ֆիլտեր F8 տիպի | ԲԸԱՀ | 75,627 | Hungarian Trading Company KFT |

| | | | | |
|-----------------|---|------|---------|----------------------------|
| 11 | Հակ ընկերության pH չափիչ սարքի տարեկան փոխարինման ենթակա էլեկտրոդ/տարբեր/ | ԲԸԱՀ | 6,553 | Hansung Cleantech Co., LTD |
| Ընդամենը | | | 301,738 | |

2018թ. գնումներն իրականացնելիս, համաձայն ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման, Ընկերությանը թույլատրվել է որոշ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնել անմիջապես արտադրողներից կամ վերջիններիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձանցից: Ստորև բերվող 794,168.79 հազ. դրամի գնումները կատարվել են մեկ անձից և առանց համապատասխան պայմանագրեր կնքելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 71-րդ կետի այն է՝ «Մեկ անձից գնումների կատարման ժամանակ գործում են սույն կարգի 7-րդ բաժնով (Պայմանագրի կնքումը) սահմանված պահանջները՝ հաշվի առնելով որոշակի առանձնահատկությունները՝...» պահանջների հետ:

Ընկերության կողմից 2018թ.-ին «Aryanko Trading» և «MOOG INC. Industrial Controls Division» ընկերություններից ձեռքբերումները մեկ անձից գնման ձևով չեն հիմնավորվում (գնումները կատարվել են մինչև ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման ընդունումը): Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի «Մեկ անձից գնում կատարելու պայմանները» պահանջների հետ: Արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, ըստ կազմակերպությունների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումներ 2018թ.

Աղյուսակ-2

| h/h | Անվանումը | Գնման ձևը (ընթացակարգ) | Ընդամենը ծախսերը (հազ. դրամ), այդ թվում՝ ԱԱՀ | Ընկերության անվանում |
|-----|---|------------------------|--|--|
| 1 | CCI Valve Technology AB Ռետինե խտարարների հավաքածու Valve Soft Goods Kit 962001-01-SOFT | ՄԱ | 14,933.61 | CCI Valve Technology AB |
| 2 | Կափույր Servo Valve 730-069B | ՄԱ | 5,127.60 | MOOG INC. Industrial Controls Division |
| 3 | ProMinent BT4 1005 SST դոզավորման պոմպի մխոցային հատվածի պահեստամասերի հավաքածու՝ ProMinent արտադրողի կատալոգով Spare parts Kit 1002552 | ՄԱ | 9,035.86 | ProMinent GmbH |
| 4 | Aryanko Trading Փական HGSG HP super Heater MOV | ՄԱ | 11,914.76 | Aryanko Trading |

| | | | | |
|----|--|----|------------|--------------------------------|
| 5 | Hanshin Machinery CO LTD Ատամնավոր փոխարկիչ Air End Assembly CD-8D, Gear set=27, I=4.857 231182 | ՄԱ | 22,440.45 | Hanshin Machinery CO LTD |
| 6 | Howden Compressors Գազային կոմպրեսորի մասեր /վերանորոգման հավաքածու/Annual Inspection Kit (VITON) KW321-6-V | ՄԱ | 11,645.55 | Howden Compressors |
| 7 | KSB պոմպերի միջադիրներ Spacer Sleeve 47,7x50-3D IN065569 | ՄԱ | 23,234.04 | KSB |
| 8 | Premier Fluid Systems Էլ. փոխարկիչ Vacuum Switch SQ D MODEL 9016 GAW SVA9016GAW | ՄԱ | 13,341.97 | Premier Fluid Systems |
| 9 | SHIN SHIN MACHINERY CO. LTD Ռետինե միջադիրներ O-ring (Deaerator Feed Water Pump For MTA 150 O3S) | ՄԱ | 16,024.21 | SHIN SHIN MACHINERY CO. LTD |
| 10 | Fuji Elektric Co LTD Մասեր և նյութեր | ՄԱ | 207,898.75 | Fuji Elektric Co LTD |
| 11 | Կոռոզիոն ինհիբիտոր Nalco 23212 | ՄԱ | 76,287.11 | Hungarian Trading Company GmbH |
| 12 | Նատրիումի հիպոքլորիտ Nalco 93033 | ՄԱ | 40,067.49 | Hungarian Trading Company GmbH |
| 13 | Դիսպերսանտ Nalco 8506 | ՄԱ | 21,503.55 | Hungarian Trading Company GmbH |
| 14 | Բիոցիդ Nalco 8514 | ՄԱ | 12,511.28 | Hungarian Trading Company GmbH |
| 15 | TRAC 109.15R NALCO | ՄԱ | 735.68 | Hungarian Trading Company GmbH |
| 16 | Ֆոսֆատային լուծույթ Nalco 72215 | ՄԱ | 15,724.13 | Hungarian Trading Company GmbH |
| 17 | Հեղուկ ամիններ Nalco 72310 | ՄԱ | 8,556.30 | Hungarian Trading Company GmbH |
| 18 | Շոգետուրբինի կապիտալ աշխատանքներ C2 ինսպեկցիայի շրջանակներում FUJI ընկերության կողմից | ՄԱ | 266,509.40 | Fuji Electric Co. LTD |
| 19 | Հակահրդեհային համակարգի սպասարկման ծառայություններ Silvani ընկերության կողմից | ՄԱ | 3,827.35 | Valveitalia Fire Fighting |
| 20 | GTG Step-Up տրանսֆորմատորի տեղային ղեկավարման պանելի (Hyosung Corporation) փոխարինումից հետո կարգաբերման ծառայություններ | ԳՀ | 2,956.56 | Hyosung Corporation |
| 21 | Գազի կոմպրեսորի տարեկան ինսպեկցիայի համար խորհրդատվության ծառայություն Howden Compressors | ՄԱ | 6,464.19 | Howden Compressors |
| 22 | օդի կոմպրեսորի վերանորոգման ծառայություններ Hanshin Machinery CO LTD | | 3,428.95 | Hanshin Machinery CO LTD |
| | Ընդամենը | | 794,168.79 | |

Հեղևանք

2017-2018թթ. արտասահմանյան գործընկերներից իրականացված մեկ անձից և բանակցային ընթացակարգերով, առանց համապատասխան պայմանագրեր կնքելու գնումները չեն բավարարում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի այն է՝ «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում» պահանջներին:

Առաջարկ

Մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումները, մասնավորապես արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման պահանջներին համապատասխան և կնքել պայմանագրեր:

10. Գնումների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. Ընկերության կողմից կատարվել են գնումներ, որոնց հրավերների տեխնիկական բնութագրերում հղում է կատարվում գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ:

2017-2018թթ. Ընկերության կողմից կատարվել են գնումներ, որոնց հրավերների տեխնիկական բնութագրերում հղում է կատարվում գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ, այն է՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում

պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Հետևանք

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, ըստ գնման հայտով նկարագրվածի համեմատվել են գնման պայմանագրով ներկայացվածի հետ և ամբողջությամբ կրկնվում են, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

| Գնման առարկան | Գնման ընթացակարգի մասնակից | Գնման առարկայի գինը(հազ. դրամ) | Գնման առարկայի գնման հայտով համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) | Գնման առարկայի պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) |
|--|----------------------------|--------------------------------|---|---|
| Հիմնական նորոգման ընթացքում ծանրակշիռ և արտագաբար իտային բեռների փոխադրման ծառայություն | Հիդրոէլեկտրամոնտաժ ՓԲԸ | 9,840.0 | Տրայլեր, 50տ բեռնամբարձությամբ “КрА3” կամ “Татра” հիմքի վրա, հիդրոհրիչներով Բեռի ամենամեծ լայնությունը ոչ ավել 5մ, բարձրությունը ոչ ավել -2.5մ , ամենա ծանր մասը 35 տ: Ընդհանուր բեռը 300տ 27 Օր (օրական 10 ժամ) | Տրայլեր, 50տ բեռնամբարձությամբ “КрА3” կամ “Татра” հիմքի վրա, հիդրոհրիչներով Բեռի ամենամեծ լայնությունը ոչ ավել 5մ, բարձրությունը ոչ ավել -2.5մ, ամենա ծանր մասը 35 տ: Ընդհանուր բեռը 300տ 27 Օր (օրական 10 ժամ) |
| Շարժիչի յուղեր | Պրեմիում Մոթորս ՍՊԸ | 1,033.7 | Տիպը՝ ISO VG 320 Մածուցիկությունը 40°C-ի դեպքում 320 ըստ ISO3448 ստանդարտի Խտությունը 15°C-ի դեպքում 903 ըստ ISO12185 ստանդարտի Բռնկման ջերմաստիճանը 255 °C ըստ ISO 2592 ստանդարտի Սառման ջերմաստիճանը -15°C ըստ ISO3016 ստանդարտի Omala S2 G 320 Արտադրող՝ Shell | Տիպը՝ ISO VG 320 Մածուցիկությունը 40°C-ի դեպքում 320 ըստ ISO3448 ստանդարտի Խտությունը 15°C-ի դեպքում 903 ըստ ISO12185 ստանդարտի Բռնկման ջերմաստիճանը 255 °C ըստ ISO 2592 ստանդարտի Սառման ջերմաստիճանը -15°C ըստ ISO3016 ստանդարտի Omala S2 G 320 Արտադրող՝ Shell |
| Շարժիչի յուղեր | Պրեմիում Մոթորս ՍՊԸ | 406.5 | Տիպը՝ Gadus S2 V100 2 NLGI կարգ - 2 Մինեռալային քսայուղ Կինեմատիկ մածուցիկությունը 40°C-ի դեպքում 100 ըստ ASTM D445 ստանդարտի Կինեմատիկ մածուցիկությունը 100°C-ի դեպքում 11 ըստ ASTM D445 ստանդարտի Պենետրացիան խառնումից հետո 265-295; 25°C աստիճանի դեպքում ըստ ASTM D217 ստանդարտի Հեղուկ վիճակի ջերմաստիճանը +180°C ըստ IP396 ստանդարտի Արտադրող՝ Shell | Տիպը՝ Gadus S2 V100 2 NLGI կարգ - 2 Մինեռալային քսայուղ Կինեմատիկ մածուցիկությունը 40°C-ի դեպքում 100 ըստ ASTM D445 ստանդարտի Կինեմատիկ մածուցիկությունը 100°C-ի դեպքում 11 ըստ ASTM D445 ստանդարտի Պենետրացիան խառնումից հետո 265-295; 25°C աստիճանի դեպքում ըստ ASTM D217 ստանդարտի Հեղուկ վիճակի ջերմաստիճանը +180°C ըստ IP396 ստանդարտի Արտադրող՝ Shell |
| Շարժիչի յուղեր | Պրեմիում Մոթորս ՍՊԸ | 119.3 | Մածուցիկությունը 40°C-ի դեպքում 46Խտությունը 15°C-ի դեպքում 874Բռնկման ջերմաստիճանը 230°CՍառման ջերմաստիճանը -27°CShell Tellus S2 M46 | Մածուցիկությունը 40°C-ի դեպքում 46Խտությունը 15°C-ի դեպքում 874Բռնկման ջերմաստիճանը 230°CՍառման ջերմաստիճանը -27°CShell Tellus S2 M46 |

| | | | | |
|----------------------------------|---------------------|----------|---|--|
| Շարժիչի յուղեր | Պրեմիում Մոթորս ՍՊԸ | 1,048.3 | Տիպը՝ ISO VG68 Մաճուճիկությունը 40°C-ի դեպքում 65,1 ըստ ASTM D445 ստանդարտի Խտությունը 15°C-ի դեպքում 0,87 ըստ ASTM 4052 ստանդարտի Բռնկման ջերմաստիճանը 223°C ըստ ASTM D92 ստանդարտի Սառման ջերմաստիճանը -15°C ըստ ASTM D97 ստանդարտի Mobil, Heavy Medium D.T.ER VG68 | Տիպը՝ ISO VG68 Մաճուճիկությունը 40°C-ի դեպքում 65,1 ըստ ASTM D445 ստանդարտի Խտությունը 15°C-ի դեպքում 0,87 ըստ ASTM 4052 ստանդարտի Բռնկման ջերմաստիճանը 223°C ըստ ASTM D92 ստանդարտի Սառման ջերմաստիճանը -15°C ըստ ASTM D97 ստանդարտի Mobil, Heavy Medium D.T.ER VG68 |
| Չտիչ կայանների սարքեր | Գրիգ Շին ՍՊԸ | 1,291.0 | Տիպը՝ Hydraulic filter HC 9021FDT4H (15 MICRON/PAPER) PALL Corporation | Տիպը՝ Hydraulic filter HC 9021FDT4H (15 MICRON/PAPER) PALL Corporation |
| Չտիչ կայանների սարքեր | Գրիգ Շին ՍՊԸ | 234.2 | Տիպը՝ Hydraulic filter HC 7500SKP4H (5 MICRON/PAPER) PALL Corporation | Տիպը՝ Hydraulic filter HC 7500SKP4H (5 MICRON/PAPER) PALL Corporation |
| Չտիչ կայանների սարքեր | Գրիգ Շին ՍՊԸ | 820.6 | Տիպը՝ HC9601FDS13Z (10MICRON) PALL Corporation | Տիպը՝ HC9601FDS13Z (10MICRON) PALL Corporation |
| Անիոնիտ | ԹԱԳՀԷ Մ ՍՊԸ | 3,090.0 | Տիպը՝ Lewatit® MonoPlus M 800, կիրառություն՝ Խառը տիպի իոնափոխանակիչ ֆիլտրի բաղադրիչ նյութ, խտությունը 1,07-1,08 գր/մլ, կառուցվածքը՝ գելային տիպի բջիջներ, ընդհանուր ունակությունը՝ min 1,4 էկ/լ, ստաբիլության միջակայքն ըստ pH-ի՝ 1-14, ապրանքի պահեստավորման ժամկետը՝ 2 տարի, ապրանքի պահեստավորման ջերմաստիճանը՝ -20-40 °C | Տիպը՝ Lewatit® MonoPlus M 800, կիրառություն՝ Խառը տիպի իոնափոխանակիչ ֆիլտրի բաղադրիչ նյութ, խտությունը 1,07-1,08 գր/մլ, կառուցվածքը՝ գելային տիպի բջիջներ, ընդհանուր ունակությունը՝ min 1,4 էկ/լ, ստաբիլության միջակայքն ըստ pH-ի՝ 1-14, ապրանքի պահեստավորման ժամկետը՝ 2 տարի, ապրանքի պահեստավորման ջերմաստիճանը՝ -20-40 °C |
| Քացախաթթու | Յունիքոմ ՍՊԸ | 2,440.8 | անօրգանական նստվածքների լվացող նյութ </O (reverse osmosis) համակարգի համար, 1%-ոց նյութի pH-ը 3,0-3,5, 1%-ոց նյութի խտությունը-1,08-1,1 կգ/լ, փաթեթավորումը՝ դոյլ-Pail: 25 lbs/ 11.36 կգ Արտադրող՝ Professional water technologies | անօրգանական նստվածքների լվացող նյութ </O (reverse osmosis) համակարգի համար, 1%-ոց նյութի pH-ը 3,0-3,5, 1%-ոց նյութի խտությունը-1,08-1,1 կգ/լ, փաթեթավորումը՝ դոյլ-Pail: 25 lbs/ 11.36 կգ Արտադրող՝ Professional water technologies |
| CPI CP 1516-100 տիպի յուղ | Էյ- Ի-Ջի-Սերվիս ՍՊԸ | 22,398.0 | Տիպը CPI CP 1516-100 (Lubryzol) Մաճուցիկությունը 40 ⁰ -C-ի դեպքում-92.3, ըստ ASTM D445 ստանդարտի: Օդի անջատումը -50 ⁰ -ի դեպքում ≤5 րոպե: Այրման ջերմաստիճանը ≥ 277 ⁰ C ըստ ASTM D92 ստանդարտի: Բռնկման ջերմաստիճանը ≥ 260 ⁰ ըստ ASTM D92 ստանդարտի: Խտությունը 0,992 ըստ ASTM D1298 ստանդարտի: | Տիպը CPI CP 1516-100 (Lubryzol) Մաճուցիկությունը 40 ⁰ -C-ի դեպքում-92.3, ըստ ASTM D445 ստանդարտի: Օդի անջատումը -50 ⁰ -ի դեպքում ≤5 րոպե: Այրման ջերմաստիճանը ≥ 277 ⁰ C ըստ ASTM D92 ստանդարտի: Բռնկման ջերմաստիճանը ≥ 260 ⁰ ըստ ASTM D92 ստանդարտի: Խտությունը 0,992 ըստ ASTM D1298 ստանդարտի: Արտադրությունը 2017թ. չօգտագործված |

Առաջարկ

Ընկերության կողմից մրցույթների հրավերների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան, հղում չկատարելով գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

1. Արձանագրությունում նշվել է, որ Ընկերությունը կատարել է մեկ անձից և բանակցային ընթացակարգերով գնումներ, մասնավորապես՝ արտասահմանյան գործընկերներից իրականացված գնումները, որով և խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ այն է՝ «Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում», նաև 23-րդ հոդվածի՝ «Մեկ անձից գնում կատարելու պայմանները» պահանջները:

Արձանագրվածի վերաբերյալ հայտում ենք, որ նշված գնումների իրականացումը՝ «Մեկ անձից գնման» ձևով, պայմանավորված է Ընկերության արտադրության անխափան աշխատանքի ապահովման անհրաժեշտությամբ: Ընկերությունը 24 ժամյա չընդհատվող ռեժիմային առանձնահատկությունով կազմակերպություն է, որի վերաբերյալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ առանձնահատկություններ նախատեսված չեն եղել: Նշված հանգամանքներն են հիմք հանդիսացել ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման ընդունման համար: Եթե մինչև ՀՀ կառավարության 29.03.2018թ. N347-Ա որոշման ընդունումը հնարավոր լիներ մրցութային ձևերով ապահովելու պահանջվող գնումների պատշաճ կատարումները, ապա բնականորեն չէր առաջանա նաև նշված որոշման ընդունման անհրաժեշտությունը, հետևաբար՝ նշված գնումները չեն կարող դիտվել գնումների մասին օրենսդրության պահանջներին անհամապատասխան իրականացված:

2. Արձանագրությունում վերոնշյալ գնումների վերաբերյալ արձանագրվել է նաև, որ չեն կնքվել պայմանագրեր, որը հակասում է 22.12.2010 թվականի «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Բանակցային ընթացակարգի դեպքում պատվիրատուն պայմանագրի պայմանների շուրջ բանակցում է նախապես որակավորված մասնակիցների հետ և կնքում պայմանագիր» պահանջներին: Արձանագրվածի վերաբերյալ հայտում ենք, որ հաշվեքննողների կողմից չի դիտարկվել այն փաստը, որ արձանագրությունում նշված բոլոր կազմակերպությունների հետ առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451 և 454 հոդվածներով նախատեսված փաստաթղթերը, որոնցով կողմերը ձեռք են բերել պայմանագրային բոլոր էական պայմանների շուրջ համաձայնություն: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448, 449 և այլ հոդվածների համաձայն կողմերի միջև պայմանագրերը կնքված են առանձին փաստաթղթերով օֆերտայի և ակցեպտի միջոցով:

3. Արձանագրությունում նշվել է, որ 2017-2018թթ. Ընկերության կողմից կատարվել են գնումներ, որոնց հրավերների տեխնիկական բնութագրերում հղում է կատարվում գնման առարկայի մոդելին, մակնիշին ու արտադրողին: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ, այն է՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Արձանագրվածի վերաբերյալ հայտնում ենք, որ կից աղյուսակում բերված գնումներից հրավերների տեխնիկական բնութագրերում հղումներ առկա են միայն այն գնումների դեպքում, որոնց շրջանակներում Ընկերության կողմից ձեռք են բերվել այնպիսի նյութեր, որոնք արդեն օգտագործվում են Ընկերության կողմից և դրանց հավելման/доливка/ կամ փոխարինման համար բացառապես պետք է օգտագործվեն նույն նյութերը (յուղեր, քսայուղեր, պահեստամասեր և այլն)՝ համաձայն նախագծերի և արտադրողների պահանջների:

11. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի հիմնական նորոգման աշխատանքներ վերաբերյալ

Անհամապատասխանություն

«Գազատուրբինի մոդեռնացում C2 ինսպեկցիայի ժամանակաշրջանում աշխատանքների ծավալները ըստ GE ընկերության ընթացակարգի, GT գեներատորի նորոգում, յուղի համակարգի մաքրում նախապատրաստելով համապատասխան սխեմաների դետալները: Շոգետուրբինի, գեներատորի և օժանդակ սարքավորումների հիմնական նորոգում ըստ Fuji ընկերության ընթացակարգի, յուղերի համակարգերի մաքրում նախապատրաստելով համապատասխան սխեմաների դետալները» ԵՐՋԵԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով մրցույթում (պայմանագրի գինը 346,624.0 հազ. դրամ) պարզվել է, որ՝

1. ԵՐՋԵԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.07.2018թ. հայտերի բացման նիստի որոշման համաձայն մրցույթում առաջին տեղն է զբաղեցրել «Էներգանորոգում» ԲԲԸ-ն իր ներկայացրած նվազագույն գնով: Գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. նիստի որոշման համաձայն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով «Էներգանորոգում» ԲԲԸ-ի հայտը, որպես հրավերի պայմաններին և պահանջներին չհամապատասխանող, գնահատվել է անբավարար՝ որակավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու պատճառով: «Էներգանորոգում» ԲԲԸ-ն 25.07.2018թ-ին գնման ընթացակարգի մասով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոք: Բողոքում նշվել է, որ «Էներգանորոգում» ԲԲԸ-ն ընդունում է մրցութային հանձնաժողովի կողմից պահանջվող փաստաթղթերը ուշ ներկայացնելու փաստը և օգտվելով մրցույթի հետագա ընթացքին տեղեկանալու իր իրավունքից պահանջել է երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի (հետագայում հաղթող մասնակից) կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը, այնուհետև նշվել է, որ տրամադրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է որ, հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, մասնավորապես. փաթեթում առկա չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով պահանջվող՝ ա) տեխնիկական միջոցների անձնագրերը և բ)ամբողջական չեն պահանջվող անձնակազմի անձնագրային տվյալները ու որակավորումը հավաստող փաստաթղթերը, մասնակցի կողմից ներկայացված անձնակազմի թվաքանակը 113 է, մինչդեռ

պահանջվում էր 136 մարդ: Վերոնշյալ թերությունները, սակայն, չեն արձանագրվել և այդ մասնակցի հայտը մրցութային հանձնաժողովի որոշմամբ բավարարվել է: Արդյունքում «Էներգանորոգում» ԲԲԸ-ն պահանջել է վերանայել մրցույթի արդյունքները և չեղյալ հայտարարել մրցույթը: Սակայն հետագայում «Էներգանորոգում» ԲԲԸ-ն իր բողոքը հետ է վերցրել, իսկ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից, հիմք ընդունելով ընկերության՝ «Էներգանորոգում» ԲԲԸ-ի բողոքն առանց քննության թողնելու մասին ներկայացված միջնորդությունը, որոշվել է բողոքը թողնել առանց քննության:

Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է որ, գնահատող հանձնաժողովի արձանագրությունները չեն պարունակել «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից թերի ներկայացված փաստաթղթերի արձանագրումներ, հետևաբար՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 47-րդ կետով սահմանված անհամապատասխանությունների շտկման համար մեկօրյա ժամկետի տրամադրման հնարավորություն:

Սակայն հաշվեքննություն իրականացնող խմբին Ընկերության կողմից ներկայացվել է պահանջվող անձնակազմի երկու ցուցակ՝ մեկը 113 հոգանոց, հիմնականում ՌԴ քաղաքացիներից բաղկացած և մյուսը՝ 36 հոգանոց ՀՀ քաղաքացիներից կազմված, որում մեկ անձի անունը կրկնվում է, մեկ որպես էլեկտրատեղակայող 3-րդ կարգի, մյուսը որպես մոնտաժնիկ 3-րդ կարգի: Ընկերության կողմից ներկայացված մյուս՝ 36 անձանցից բաղկացած փաստաթուղթը «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի ներկայացված փաստաթղթերի նախնական կազմում չի եղել:

Համաձայն ՀՀ հաշվեքննիչ պալատի գրությանն ի պատասխան Ընկերության կողմից տրված տեղեկատվության, Էներգոբլոկի նորոգման աշխատանքների ընթացքում «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի աշխատակիցների «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի տարածք մուտք գործելու և դուրս գալու հաշվառման անհրաժեշտություն չի եղել, իսկ կապալառու կազմակերպության կողմից ներկայացված գրությունների համաձայն թվով 84 աշխատակիցների տրվել է ժամանակավոր անցագրեր, որոնցից միայն 34 անձի անուն ազգանուն կա պահանջվող անձնակազմի 113 հոգանոց ցուցակում, իսկ 36 հոգանոց լրացուցիչ (ՀՀ քաղաքացիներից կազմված) ցուցակից և ոչ մեկի անունը չկա ժամանակավոր անցագրեր ստացածների 84 հոգանոց ցուցակում:

Միաժամանակ՝ համաձայն ընկերության գլխավոր տնօրենի «ՀՇԳՑԷ-ի 2018թ. հիմնական նորոգման աշխատանքների մասին» 16.07.2018թ. թիվ 260 Լ/Տ հրամանի 9-րդ կետի, էներգաբլոկի վերանորոգման ընթացքում հրահանգվել է ապահովվել անցագրային ռեժիմի խստորեն պահպանումը:

Առկա է անհամապատասխանություն հրավերով պահանջված աշխատողների թվաքանակի, կապալառուի կողմից որպես աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշին համապատասխանության համար ներկայացված աշխատողների ցանկի և անցագիր ստացած կապալառուի աշխատողների թվաքանակի և անձնական տվյալների միջև:

Չի կատարվել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են

գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են», ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ ենթակետի և ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով բաց մրցույթի հրավերի մաս 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի (4),(գ) և հավելված 5.2-ի վերջին պարբերության պահանջները, այն է՝ «Ամբողջական չեն անձնակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերը»: Արդյունքում «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի հայտը բավարարվել և ճանաչել է հաղթող, վերջինիս հետ կնքել է պայմանագիր:

2. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգորբլիկի հիմնական նորոգման պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտման ժամկետի օրը՝ 26.09.2018թ. կողմերի միջև կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի համաձայն կատարվել են հետևյալ փոփոխությունները.

ա) աշխատանքների կատարման ժամկետը երկարացվել է 20 օրով և վերջնաժամկետ է սահմանվել 16.10.2018թ.

բ) պայմանագրի արժեքը 725,991.25 ԱՄՆ դոլարից դարձել է 718,073.81 ԱՄՆ դոլար, որոշ աշխատանքներ կրճատվել են և ավելացել է գազատուրբինի և շոգետուրբինի ու գազատուրբինի գեներատորների վերանորոգման որոշ լրացուցիչ աշխատանքներ:

Համաձայն ՀՀ հաշվեքննիչ պալատի գրությանը ի պատասխան ընկերության կողմից տրված տեղեկատվության, պայմանագրով սահմանված որոշ աշխատանքների կրճատումը և լրացուցիչ աշխատանքների կատարումը պայմանավորվել է, սարքավորումների նորոգման ժամանակ քանդելուց, կազմատելուց հետո բոլոր հանգույցների արատանշման և զննման արդյունքում հայտնաբերված թերություններով, ինչպես նաև որոշ աշխատանքների կատարման անհրաժեշտություն չառաջանալու հանգամանքով, որի նպատակով ընկերության և կապալառուի հետ ստորագրվել է հիմնական սարքավորումների թերությունների արձանագրման թվով երկու ակտեր: Նշված փաստաթղթերը (ակտերը) կազմվել են 17.09.2018թ-ին՝ պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտից ընդամենը ինը օր առաջ, միաժամանակ նշվել է նաև որ լրացուցիչ աշխատանքները կատարվել են ոչ թե 26.09.2018թ-ից մինչև 08.10.2018թ. ժամանակահատվածում, այլ դրանց ի հայտ գալու պահից:

Վերը նշվածից հետևում է, որ լրացուցիչ աշխատանքները կատարվել են առանց պայմանագրում նախօրոք փոփոխություններ կատարելու՝ համաձայնագիր կնքելու:

Լրացուցիչ աշխատանքների (լրացուցիչ համաձայնագրի տեխնիկական բնութագրի 116-րդ կետով) սահմանվել են հետևյալ աշխատանքները՝ «գազատուրբինի ռոտորի հանում, հետ տեղադրում և կոմպրեսորի ու տուրբինի թիակների հղկում տաշում (расточка торцов лопаток)», բայց գազատուրբինի ռոտորի հանման և հետ տեղակայման, շինհրապարակ տեղափոխման աշխատանքները նախատեսված են եղել պայմանագրով (տեխնիկական բնութագիր 74-րդ կետ) և դրանց կատարողականները ներկայացված են եղել մինչև լրացուցիչ համաձայնագրի կնքումը N 1 և N 2 կատարողական ակտերով:

Հղկման (расточка) աշխատանքներ կատարվել են միայն կոմպրեսորի թիակների վրա: Ստուգման օբյեկտի պատասխանատու աշխատակիցների կողմից չի բացատրվել ու չի

հիմնավորվել թե կոմպրեսորի թիակների հղկման աշխատանքները արդյո՞ք նախատեսված և ցուցված են եղել ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի հիմնական նորոգման աշխատանքների տեխնիկական կանոններով, պահանջներով կամ ստանդարտներով, չի ներկայացվել նաև տեխնիկական հսկողություն իրականացնող «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության ցուցումները տվյալ աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես, որ առկա է «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության գրություն ուղղված ընկերությանը, որով «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության տեխնիկական դեպարտամենտը արձանագրել է մատակարարված թիակների մասով խնդիրներ և առաջարկել է իր հաշվին իրականացնել դրանց հնարավորինս շուտ փոխարինումը և փոխադրումը, իսկ հաշվեքննողների հարցին, թե «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության մասնագետների կողմից եղել է արդյոք առկա թիակները այլ թիակներով փոխարինելու առաջարկ, ընկերության պատասխանատու աշխատողները հստակ պատասխան չեն տվել:

Հեղևանք

Աշխատանքների ժամկետների երկարացման արդյունքում Ընկերությունը կրել է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝ «Ջեներալ էլեկտրիկ» ընկերության մասով 158,015.71 եվրո, իսկ «Ֆուլի» ընկերությունների մասով՝ 15,426.36 ճապոնական իեն: Համաձայն 2018թ. տարեկան հաշվետվության՝ «Ընկերությունը էլեկտրական էներգիա 72,907 հազ.կվտ/ժ քիչ է արտադրել նախատեսվածից: Պայմանավորված 2018թ.-ին Ընկերությունում իրականացված կապիտալ վերանորոգման ժամկետների երկարաձգման հանգամանքով՝ էներգոբլոկի կանգառը նախատեսված 58 օրից փաստացի կազմել է 69 օր»: Բացի այդ 2018թ.-ին ՀՇԳՑ էներգաբլոկը 7368 ժամից փաստացի աշխատել է 7108 ժամ, այսինքն՝ կանգառը կազմել է 1652 ժամ, մինչդեռ 2018թ.-ի համար նախատեսված նորոգումների համար կանգառը պետք է կազմեր 1392 ժամ: Կապիտալ վերանորոգման աշխատանքների ժամկետի երկարացման հետևանքով՝ կայանի ավել կանգառը կազմել է 260 ժամ: Կայանի 1652 ժամ կանգառի հետևանքով անհրաժեշտ էլեկտրաէներգիան ձեռք է բերվել ՀԷՑ ՓԲ ընկերությունից: Սեփական կարիքների համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի համար Ընկերությունը պլանավորել էր կատարել 45,740 հազ. դրամի ծախս, սակայն փաստացի կատարել է 80,113 հազ. դրամի: Ավել կատարված ծախսը կազմել է՝ 34,372.0 հազ. դրամ: Սակայն մեր կողմից կատարված ստուգման արդյունքում պարզվել է, որ կապիտալ վերանորոգման աշխատանքների ժամկետը նախատեսված 51 օրից փաստացի կազմել է 62օր, ինչպես նաև համաձայն Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման՝ սեփական կարիքների («ՀԷՑ» ՓԲԸ-ից) համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի համար Ընկերությունը պլանավորել էր կատարել 45,740 հազ. դրամի ծախս (քանի որ փոխհոսքերի գործառույթը չի պլանավորվում), սակայն փաստացի կատարել է 80,113 հազ. դրամի, որից 26,447.0 հազ. դրամը (1,303,824 կվտաժ) փոխհոսքեր գործարքի շրջանակներում էլեկտրական էներգիայի արտահանման համար, այսինքն Ընկերությունը առանց փոխհոսքերի «ՀԷՑ» ՓԲԸ-ից սեփական կարիքների համար ձեռք է բերված էլեկտրական էներգիան կազմել է 53,666 հազ. դրամ:

ՀԾԿՀ-ի կողմից հատկացված 45,740 հազ. դրամի փոխարեն Ընկերությունը փաստացի ՀԷՑ ՓԲԸ-ից ձեռք բերված էլեկտրական էներգիայի գծով ծախսը կազմել է 53,666 հազ. դրամ՝ գերաճախսը կազմել է 7,926.0 հազ.դրամ:

Առաջարկ

1. Մրցույթների գնահատող հանձնաժողովի արձանագրությունները կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 47-րդ կետի, ինչպես նաև մրցույթների հրավերների պահանջների համապատասխան:

2. Պայմանագրերով նախատեսված ծավալներում լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտության դեպքում անել պայմանագրում նախօրոք փոփոխություններ և նոր կնքել համաձայնագրեր, որոնց նախահաշիվներում բացառել նույնատիպ աշխատանքների կրկնողությունները:

3. Կոմպրեսորի թիակների վրա հղկման (расточка) աշխատանքներ կատարել միայն ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի հիմնական նորոգման աշխատանքների տեխնիկական կանոններով, պահանջներով կամ ստանդարտներով սահմանված կարգով: Հաշվի առնել նաև տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունների ցուցումները տվյալ աշխատանքների վերաբերյալ:

4. Նվազագույնի հասցնել Ընկերությունում կապիտալ աշխատանքների ժամկետների երկարացման արդյունքում իրականացված լրացուցիչ ծախսերը:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

Արձանագրության այս բաժնի 1-ին կետում նշվել է, որ Ընկերության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այն է՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են», ինչպես նաև մրցութային հանձնաժողովը, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ ենթակետի և ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18 ծածկագրով բաց մրցույթի հրավերի մաս 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի (4),(գ) և հավելված 5.2-ի վերջին պարբերության պահանջները, այն է՝ «Ամբողջական չեն անձնակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերը»: Արդյունքում «Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի հայտը բավարարվել և ճանաչել է հաղթող, վերջինիս հետ կնքել է պայմանագիր:

Արձանագրվածի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

- **«Էներգամոնտաժ» ԲԲԸ-ի հայտի մերժման վերաբերյալ՝**

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար 2018 թ-ի գնումների պլանով նախատեսված «ՀՇԳՑ թիվ 1 էներգոբլոկի գազատուրբինի մոդեռնացում C2 ինսպեկցիայի ժամանակաշրջանում GT գեներատորի նորոգում, շոգետուրբինի, գեներատորի և օժանդակ սարքավորումների հիմնական նորոգում, յուղերի համակարգերի մաքրում նախապատրաստելով համապատասխան սխեմաների դետալների աշխատանքների» ձեռքբերման համար կազմակերպվել է «ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18» ծածկագրով գնման բաց ընթացակարգ, գնման ընթացակարգի ձևը ընտրվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 20-րդ հոդվածի հիման վրա:

«ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18» ծածկագրով գնման բաց ընթացակարգի մրցույթին ներկայացվել է 4 հայտ:

«ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.07.2018թ. հայտերի բացման նիստի որոշման համաձայն՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, առաջին տեղին է զբաղեցրած մասնակից է ճանաչել «Էներգանորոգում» ԲԲԸ-ին:

ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտի հաջորդ աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի, armeps.am համակարգի «ոչ ավտոմատ ծանուցումներ» բաժնի միջոցով 2018 թ-ի հուլիսի 7-ին ծանուցել է «Էներգանորոգում» ԲԲԸ-ին, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել «ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ Մասի՝ 3-րդ կետի 3.1 և 3.2 ենթակետերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի սահմանված ժամկետի ավարտից հետո «Էներգանորոգում» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը եղել են թերի:

«ԵՐՋԷԿ-ԲՄԱՇՁԲ 31/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման 47-րդ կետով, էլեկտրոնային փոստի, armeps.am համակարգի «ոչ ավտոմատ ծանուցումներ» բաժնի միջոցով 2018 թ-ի հուլիսի 10-ին ծանուցել է «Էներգանորոգում» ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը, և «Էներգանորոգում» ԲԲԸ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չստանալով համապատասխան փաստաթղթերը, 2018թ-ի հուլիսի 18-ի իր հերթական նիստում, մերժել է վերջինիս հայտը և էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Տեպլոէներգամոնտաժ» բաժնետիրական ընկերությանը (АО Теплоэнергомонтаж):

• **«Տեպլոէներգամոնտաժ» ՓԲԸ-ի հայտի բավարարման ընթացակարգում “Գնումների մասին” ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի պահանջների խախտման վերաբերյալ՝**

«Տեպլոէներգամոնտաժ» բաժնետիրական ընկերությունը համաձայն ստացված ծանուցման և սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերի 2-րդ Մասի՝ 3-րդ կետի 3.1 և 3.2 կետերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովին ներկայացվել է հավելված 5-ը,

1) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերը, հաշիվ ապրանքագրերի պատճենները:

2) հավելված N 5.1-ը (ցուցակով) տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերը և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) հավելված N 5.2-ը (2 ցուցակներով)՝ մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմը: Աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև այդ մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները: «Տեպլոէներգամոնտաժ» ԲԸ-ն ներկայացրել է երկու ցուցակ՝ մեկը 113 հոգանոց, հիմնականում ՌԴ-ի քաղաքացիներից կամ ՌԴ-ում բնակվող այլ երկրների քաղաքացիներից և մյուսը՝ 36 հոգանոց ՀՀ քաղաքացիներից կազմված:

Վերոնշյալից ակնհայտ է, որ «Տեպլոէներգամոնտաժ» ԲԸ կողմից ներկայացված որակավորումը հավաստող փաստաթղթերը ամբողջական են, և վերջինիս հայտը բավարարվել է օրենքի և հրավերի պահանջներին համապատասխան: Հարկ է նշել, որ արձանագրությունից ենթադրվում է, որ հաշվեքննողները հիմք են ընդունել «Էներգանորոգում» ԲԲԸ կողմից գնման ընթացակարգի վերաբերյալ բերված բողոքում շարադրված հիմքերը, ինչը իրականությանը չի համապատասխանում, որի պատճառով էլ վերջինս իր բողոքը հետագայում հետ է վերցրել:

Արձանագրության այս բաժնի 2-րդ կետում նշված ներքոնշյալ հարցերի առնչությամբ հայտնում ենք հետևյալը՝

- “Գազատուրբինի ռոտորի հանում” աշխատանքը նախատեսված էր սկզբնական պայմանագրում 1 հատ չափաբաժնով, իսկ ընթացքում անհրաժեշտություն առաջացավ ևս մեկ անգամ տեղադրել և հանել՝ բացակները ստուգելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

- Հղկման աշխատանքները կատարվել են արտադրողի ցուցումով, կատարվել է միայն կոմպրեսորի թիակների վրա, քանի որ արտադրողի մասնագետի չափումներից հետո միայն դրանց վրա հղկելու անհրաժեշտություն է առաջացել: Հղկումը կատարվել է արտադրողի կողմից ժամանակավորապես մատակարարված՝ այդ աշխատանքների համար նախատեսված հատուկ գործիքներով և հարմարանքներով, իրենց հսկողությամբ: Հղկման անհրաժեշտությունը պայմանավորված է կոմպրեսորի թիակների և կոմպրեսորի իրանի միջև անհրաժեշտ բացակն ապահովելու համար, որի կատարման անհրաժեշտությունը որոշվել է արտադրողի կողմից հատուկ գործիքներով իրականացված չափումների արդյունքում: Արտադրողի մասնագետի ցուցումներին հակառակ կամ առանց նրանց համաձայնության որևէ աշխատանք չի կատարվել և չէր կարող կատարվել, քանի որ դա կբերեր երաշխիքների հետ կանչման և աշխատանքների դադարեցման:

- Ինչ վերաբերում է թերություններով թիակներին՝ արտադրողի կողմից ուղղվել է նամակ, որ կոմպրեսորի 19-րդ աստիճանի և տուրբինի ուղղորդիչ ապարատի 3-րդ աստիճանի թիակները, որոնք արդեն մատակարարվել էին իրենց կողմից անհրաժեշտ է փոխարինել և մենք տվել ենք մեր համաձայնությունը, որ դրանք փոխարինվեն: Որից հետո նշված աստիճանների նոր թիակները նրանց կողմից մատակարարվել են, իսկ նախկին մատակարարվածները նրանց են վերադարձվել: Նշվածի մասին հստակ ասվել է, իսկ նամակագրությունը տրամադրվել:

- **Աշխատանքների ժամկետի երկարաձգումը** պայմանավորված է եղել լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությամբ, ինչպես նաև հետևյալ հանգամանքներով՝

1) Գազատուրբինի ուղղորդիչ ապարատի 3, 4, 5 աստիճանների ապամոնտաժման և փոխարինման համար գործարանի ներկայացուցիչների ցուցումով կտրվել են հին թիակները. կտրման պատճառ է հանդիսացել այն, որ 2010թ. –ից այդ թիակները գտնվելով շահագործման մեջ, դրանց սևեռիչները անշարժացել են և ստանդարտ եղանակով անհնար էր դրանց ապամոնտաժումը: Նշված թիակների ոչ ստանդարտ եղանակով ապամոնտաժումը հանգեցրել է ժամանակի մեծ կորստի:

2) Գազատուրբինի գեներատորի Ռոտորի նորոգման աշխատանքները կատարվել է արտադրողի պահանջով, հաշվի առնելով, որ հաջորդ կապիտալ նորոգումը (C ինսպեկցիա) լինելու է 6 տարի հետո: Նորոգման արդյունքում պարզվել է, որ ռոտորի դետալներից մեկը ունի բավականին լուրջ վնասվածք և ենթակա է փոխարինման (կից ներկայացվում է արտառանձման ակտը և նկարը): Վնասվածքի հայտնաբերումից անմիջապես քայլեր են ձեռնարկվել ձեռք բերելու այն, որը ևս նախատեսված չէր, իսկ դա լինելով հատուկ դետալ պետք է ձեռք բերվեր արտադրողից և բնականաբար դա ևս ենթադրում էր ժամանակի կորուստ և ազդում նորոգման տևողության վրա:

- **Ժամկետի երկարաձգման մասով կատարված հաշվարկների վերաբերյալ՝**

Արձանագրության այս բաժնում նկարագրված հանգամանքները վերաբերվում են վերանորոգման ժամկետների երկարաձգմանը, սակայն ներկայացված են տարեկան կանխատեսումների և տարեկան փաստացի արդյունքների համեմատականը, որը ճիշտ չի արտացոլում կապիտալ վերանորոգման ժամանակահատվածին վերաբերվող թվային ցուցանիշները:

12. Գազատուրբինի մոդեռնացման և շոգեփոխարինի կապիտալ աշխատանքների համար մասերի ձեռք բերման վերաբերյալ

Անհամապատասխանություն

«Գազատուրբինի մասերի ձեռք բերում «Զեներալ էլեկտրիկ» ընկերությունից» (Գինը 355,725.2 հազ. դրամ) և «Շոգեփոխարինի մասերի ձեռք բերում «Ֆուջի» ընկերությունից»

(Գինը 207,898.7 հազ. դրամ) մեկ անձից գնման գործընթացներում պարզվել է, որ չկատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ «Գնման առարկայի բնութագրերը» 1-ին կետի՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում» և 3-րդ կետի՝ «Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:» պահանջները Ընկերությունը գնվող ապրանքների (մասերի) համար պահանջվող տեխնիկական բնութագրեր չի ներկայացրել «Ֆուջի» ընկերությանը:

Մատակարարված ապրանքների (մասերի) համար երկկողմանի հաստատված նախահաշիվներ գնահաշվարկներ գոյություն չունեն: Գնումների պլանում բացակայում են ապրանքների ձեռք բերման միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները, իսկ փաստացի ձեռքբերումների գները ներկայացված է մեկ թվով, այլ ոչ թե ըստ ապրանքների գների:

Հեղևանք

«Գազատուրբինի և «Շոգետուրբինի մասերի ձեռք բերում «Ջեներալ էլեկտրիկ» և «Ֆուջի» ընկերություններից» մեկ անձից գնման գործընթացները չեն բավարարում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի այն է՝ «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում» պահանջներին:

Առաջարկ

Մատակարարված ապրանքների (մասերի) համար հաստատել երկկողմանի նախահաշիվներ գնահաշվարկներ, գնումների պլանում ներառել ապրանքների ձեռք բերման միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները, իսկ փաստացի ձեռքբերումների գները ներկայացնել ոչ թե մեկ ընդհանուր գնով, այլ ըստ ապրանքների գների:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

1. **«Գազատուրբինի մոդեռնացման և Շոգետուրբինի կապիտալ աշխատանքների համար մասերի ձեռք բերում» կետում արձանագրումների մասին՝**

1-ին կետում նշվել է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Ընկերությունը գնվող աշխատանքների /ծառայությունների/ համար պահանջվող տեխնիկական բնութագրեր չի ներկայացրել «Ֆուջի» ընկերությանը:

Արձանագրվածի կապակցությամբ հայտնում ենք, որ ծառայությունները վերաբերվում են Ընկերության շոգետուրբինի հիմնանորոգման ընթացքում «տեխնիկական խորհրդատվության ծառայություններին»: Նախ՝ «Ֆուջի» ընկերությունը հանդիսանում է նշված շոգետուրբինի արտադրող կազմակերպությունը, և շոգետուրբինի ամբողջ տեխնիկական փաստաթղթերը, այդ թվում՝ հիմնանորոգումների ընթացքում անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ, մշակված են վերջինիս կողմից: Երկրորդ՝ հիմնանորոգումների ընթացքում անհրաժեշտ տեխնիկական խորհրդատվության ծավալը և աշխատանքների վերահսկողությունը ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել կամ որոշվել մասնակի՝ ըստ առանձին աշխատանքների, այսինքն՝ այն վերաբերվում է ամբողջ վերանորոգման ընթացքին և աշխատանքներին: Երրորդ՝ “Երևանի ԶԷԿ” ՓԲԸ և «Ֆուջի» ընկերության միջև կնքված պայմանագրով՝ /Quotation և Purchase Order փաստաթղթերով/ նախատեսված են «տեխնիկական խորհրդատվության ծառայություններին» համար անհրաժեշտ պահանջվող տեխնիկական մասնագետները, ըստ որոնց որոշվում է պահանջվող ծառայությունների բնույթը: Նշված փաստաթղթերը տրամադրվել են հաշվեքննողներին:

2-րդ կետում նշվել է, որ աշխատանքների /ծառայությունների/ համար երկկողմանի հաստատված նախահաշիվներ գնահաշվարկներ գոյություն չունեն, ինչպես նաև նշվել է, որ փաստացի ձեռք բերումների գները ներկայացված են մեկ թվով, այլ ոչ թե ըստ ապրանքների գների:

Արձանագրվածի վերաբերյալ հայտնում ենք, որ աշխատանքների /ծառայությունների/ գնահաշվարկները, ինչպես նաև ապրանքների փաստացի ձեռքբերումների գները ըստ ապրանքների՝ նախատեսված են “Երևանի ԶԷԿ” ՓԲԸ և «Ֆուջի» ընկերության կողմից հաստատված՝ վերոնշված Quotation և Purchase Order փաստաթղթերում:

13. Մետաղի ստուգման ծառայության մատուցման վերաբերյալ

Անհամապատասխանություն

«ՀԾԳՑ թիվ 1 էներգոբլոկի 2018թ.-ի օգոստոս- սեպտեմբեր ամիսների կանգառի ընթացքում մետաղի ստուգման ծառայությունների մատուցում» (Պայմանագրի գինը 7,329.4 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում պարզվել է, որ՝ կողմերը կատարված աշխատանքների հանձնման ակտով, պայմանագրի գումարի սահմանում կատարել են մատուցված ծառայության որոշակի տեսակների, ինչպես նաև փաստացի քանակների փոփոխություն, առանց որևէ գրավոր համաձայնության և լրացուցիչ աշխատանքների և չկատարված աշխատանքների մասով կողմերի միջև կազմվել է համադրման ակտ: Սակայն որոշ աշխատանքների մասով, որոնք համադրման ակտով հանվել են կատարվող աշխատանքների ցանկից, առկա են աշխատանքների փաստացի կատարման արձանագրություններ:

Հերևանք

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական հաշվետվության» մեջ Արձանագրություն N4/1-ով և Արձանագրություն N5 հաստատվել են անթույլատրելի արատների չհայտնաբերման տեսողական- չափողական զննման եզրակացությունները, սակայն համադրման ակտի նախատեսված աշխատանքների «փաստացի քանակներ» մասում նման աշխատանքներ նախատեսված չեն եղել: Առկա է անհամապատասխանություն փաստացի կատարված աշխատանքների և կազմված փաստաթղթերի միջև:

Առաջարկ

Կատարված աշխատանքների ժամանակ կազմված համադրման ակտերը համապատասխանեցնել փաստացի կատարված աշխատանքների հետ:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

«Մետաղի ստուգման ծառայության մատուցում» կետում արձանագրումների մասին՝

Արձանագրության մեջ նշված անհամապատասխանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կատարողի կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությամբ և ֆոտոնկարներով նշվել են փաստացի կատարված աշխատանքներ, սակայն համադրման ակտով այդպիսի աշխատանքներ չեն առաջադրվել կատարման, այսինքն՝ Պատվիրատուի կողմից այդպիսի աշխատանքների կատարում չեն ներկայացվել, դրանց կատարումը չի հաստատվել և չի վճարվել:

14. Գույքի գնահատման ծառայությունների մատուցման վերաբերյալ

Անհամապատասխանություն

«Գույքի գնահատման ծառայության մատուցում» (Պայմանագրի գինը 9,890.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հարթող ճանաչված «Արթին Էնթերպրայզ» ՍՊԸ-ի հետ 27.04.2018թ. կնքված N ԵՐՋԷԿ-ԳՀԾԶԲ 11/18 ծածկագրով պայմանագիր և պարզվել է, որ՝ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի՝ գլխավոր հաշվապահի կողմից Ընկերության գլխավոր տնօրենին ուղղված զեկուցագրում հստակ չի նշվում գնման անհրաժեշտությունը: Չկատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի այն է՝ «Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը». պահանջը, Ընկերության կողմից գնման անհրաժեշտությունը չի հիմնավորվում: Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով սահմանվել է որ,

ա) «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և Միջազգային Ստանդարտների Կոմիտեին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու նպատակով՝ 01.01.2018թ. դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների և պաշարների իրացվելի շուկայական արժեքի վերագնահատման ծառայությունների մատուցում»:

բ) «Վերագնահատման աշխատանքներ՝ թվով 25870 անվանում հիմնական միջոցներ, թվով 3118 անվանում պաշարներ»:

գ) Պարտադիր կատարվող աշխատանքներ է սահմանվել՝ «Աշխատանքների արդյունքը պետք է ամփոփվի հետևյալ գործողություններով (սահմանվել է 18 անուն գործողություն)»:

Հերևանք

Համեմատության համար անհրաժեշտ է անդրադառնալ 2017 թվականին նույնատիպ գույքի գնահատման ծառայության ձեռք բերմանը, որի պայմանագիրը կնքվել է 13.10.2017թ.-ին, այսինքն՝ ավելի քան 5 ամիս առաջ և պայմանագրի գինը կազմել է՝ 19,900.0 հազ. դրամ: Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով սահմանվել է 2018թ-ի տեխնիկական բնութագրով սահմանված գրեթե նույն նպատակը՝ **«Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և Միջազգային Ստանդարտների Կոմիտեին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու նպատակով՝ 01.12.2017թ. դրությամբ»**, իսկ ծառայության մատուցումը սահմանվել է այսպես՝ **«Կազմակերպության հիմնական միջոցների իրական և մնացորդային արժեքների, ինչպես նաև օտարվող պաշարների վերագնահատման ծառայությունների մատուցում»**: Աշխատանքների արդյունքի ամփոփման 18 անուն գործողություններից (2017թ.-ին 17 անուն գործողություն է սահմանված) 13 անունը նույն է ինչ որ 2017թ.-ինը: Պարտադիր կատարվող աշխատանքներից որոշները ներառված չեն մեզ ներկայացված հաշվետվություններում, օրինակ՝ շուկայի վերլուծություն և հավաստի տեղեկատվություն նմանատիպ սարքեր-սարքավորումների վերաբերյալ առաջարկների, առք ու վաճառքների տեղեկությունների հավաքագրման հիման վրա շուկայական արժեքի գնահատում, ինչպես նաև հիմնական միջոցի ֆոտոնկարների պահանջվող 25870 քանակ պակաս է ներկայացվել հաշվեքննող հանձնաժողովին:

Առաջարկ

Հիմնավորել կատարված գնումների անհրաժեշտությունը և գնման ընթացակարգի արձանագրությունները կազմել՝ առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

“Գույքի գնահատման ծառայությունների մատուցում” կետում արձանագրումների մասին՝
Արձանագրվածի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

Ընկերությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ ընտրել է ակտիվների վերագնահատման մոդելը՝ հիմնական միջոցների առաջին վերագնահատումն անկախ գնահատողի կողմից իրականացվել է 2012թ.-ին:

13.10.2017թ.-ին կնքված ԳՀԾՁԲ-26/17 գույքի գնահատման ծառայությունների մատուցման պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալ պահանջը՝ ոչ ընթացիկ ակտիվների՝ հին կայանի, ջերմային ցանցերի և նոր կայանի իրական և մնացորդային արժեքների վերագնահատում :

Տվյալ գնահատման իրականացման պահանջը առաջացել էր դեռ 2015թ.-ից, քանի որ 2015., 2016 թթ. համապատասխանաբար «Գրանթ Թորնթոն Աուդիտ» ՍՊԸ և «ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ կողմից տրվել է վերապահումով կարծիք, որի հիմքը այն է, որ Ընկերությունը չի իրականացրել հիմնական միջոցների փոխհատուցվող արժեքի գնահատում՝ համաձայն ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի : Հիմնական միջոցների մնացորդային արժեքով վերագնահատումից հետո, որի աշխատանքի արդյունքը ընդունվել է նաև անկախ աուդիտորի «Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ կողմից և 2017թ. ֆինանսական աուդիտի համար տրվել է դրական եզրակացություն:

2018թ.-ին Ընկերության վերադասի կողմից բարձրացվեց «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ հին ջերմաէլեկտրակայանի մեքենա-սարքավորումների և դրան պատկանող պաշարների շուկայական արժեքով գնահատման և օտարման հարցը, քանի որ սկսվել էր հին ԶԷԿ-ի գույքի վաճառքի պայմանագիր կնքելու և ՀՀ Կառավարությունից գույքի օտարման թույլտվություն ստանալու համար գործընթացը: Քանի որ ըստ ՀՀՄՍ 16.31-ի համաձայն վերագնահատման քաղաքականության դեպքում վերագնահատված գումարը դա ակտիվի իրական արժեքն է, իսկ իրական արժեքը ըստ ՖՀՄՍ 13-ի որոշվում է շուկայի հիման վրա՝ ելնելով շուկայի մասնակիցների միջև հնարավոր գործարքից՝ տվյալ դեպքում կողմերի միջև կնքվելիք պայմանագիրը, որի կից հավելվածում 1-ում նշված է գույքի ցանկը (պայմանագիրը տրամադրվել է հաշվեքննության ընթացքում): Հավելենք նաև, որ հին կայանի սարքավորումների և պաշարների ապամոնտաժման, գնահատման և օտարման գործընթացը սկսվել է դեռ 2014թ.-ից՝ ստեղծվել է աշխատանքային խումբ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանով հին կայանի սարքավորումների պիտանելիությունը որոշելու նպատակով և ՀՀ Կառավարություն ներկայացվել է որոշման նախագիծ սարքավորումների օտարման վերաբերյալ թույլտվություն ստանալու վերաբերյալ:

Ամփոփելով կարելի է փաստել, որ արձանագրությամբ ներկայացված 2017թ. և 2018թ. պայմանագրերով կատարված ծառայությունների նպատակային նշանակությունը տարբեր է և դրանց անհրաժեշտությունը հիմնավորված:

Ինչ վերաբերում է աշխատանքների ընդունման-հանձնման վերաբերյալ արձանագրության փաստերին, տեղեկացնում ենք, որ արձանագրությամբ նշված 18 անուն գործողություններից ներկայացվել է պատասխանատու ստորաբաժանմանը Հայկական ծրագրեր ներմուծման համար հատուկ պատրաստված էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, որը ներառում է հետևյալ տվյալները՝

1. ՀԾ գույքահամար,
2. 1C գույքահամար,
3. Պատասխանատու ստորաբաժանում,
4. Հիմնական միջոցի տեսակն՝ ըստ հաշվային պլանի,
5. Նյութական պատասխանատու անձի տաբելային համար ըստ ՀԾ-ի,
6. Հիմնական միջոցի կապակցող խումբը,
7. Հիմնական միջոցի անվանումը,
8. Հիմնական միջոցի նկարագիրը, մակնիշը,
9. Անշարժ գույքի սեփականության վկայական համարը,
10. Հիմնական միջոցի չափման միավորը,
11. Հիմնական միջոցի չափը,
12. Հիմնական միջոցի ձեռք բերման տարեթիվը,
13. Հիմնական միջոցի մնացորդային ժամկետը /տարի/,
14. Հիմնական միջոցի մնացորդային ժամկետը /ամիս/,
15. Հիմնական միջոցի վերաբերյալ հաշվապահական տվյալները առ 31.12.2017թ. /մինչև գնահատումը/,
16. Հիմնական միջոցի գնահատված արժեքը,
17. Հիմնական միջոցի մնացորդային և գնահատված արժեքների տարբերությունը,
18. Հիմնական միջոցի վերաբերյալ գնահատողների նշումները:

Ինչ վերաբերում է շուկայի վերլուծության, հավաստի տեղեկատվության նմանատիպ սարքեր սարքավորումների վերաբերյալ առաջարկների, առք ու վաճառքների տեղեկությունների հավաքագրման, ապա գնահատման հիմքում դրված է վերոնշյալ տեղեկատվությունը, որն արտացոլված է գնահատման հաշվետվությունում շուկայական արժեքի որոշման համար: Հիմնական միջոցների ֆոտոնկարները տրամադրվել են էլեկտրոնային կրիչով:

15. Ծրագրի հաշվապահական աութորսինգի ծառայությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

«ՀՀ-ի և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետ՝ ՎՋՄԲ) միջև 2015թ. ապրիլի 08-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» 8495-AM և 2016թ. մայիսի 12-ին ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի, ՎՋՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի Բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵՐՋԷԿ-ի համապատասխանության/իրագործելիության ապահովման աութորսինգի ծառայությունների ձեռք բերում»:(Պայմանագրի գինը 31,800.0 հազ. դրամ) գնանշման հարցման ընթացակարգում հաղթող ճանաչված «ԴԻ ԶԻ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ 08.08.2018թ. կնքված N ԵՐՋԷԿ- ԳՀԾՁԲ 69/18 ծածկագրով պայմանագիր և պարզվել է, որ՝ պայմանագրի գործողության նախատեսված ժամկետ է սահմանվել մինչև 28.08.2019թ. (մեկ տարի), հետևաբար պայմանագրի գումարի բաշխումը, ըստ ամիսների կազմում է 2,650.0 հազ. դրամ, որը վճարման ժամանակացույցով սահմանված չէ, սակայն ծառայությունների մատուցման ամսական հանձնման ընդունման արձանագրություններով և հաշիվ ապրանքագրերով ամսական վճարվել է այդ գումարը «ԴԻ ԶԻ Քոնսալթինգ» ՍՊԸ-ին: Համեմատության համար անհրաժեշտ է նշել որ նմանատիպ ծառայությունների մատուցման համար 2017թ. կնքված պայմանագրի գումարը կազմել է՝ 99,900.0 հազ. դրամ, իսկ վճարման ժամանակացույցով ըստ ամիսների նախատեսվել և հանձնման ընդունման արձանագրություններով ու հաշիվ ապրանքագրերով ամսական վճարվել է՝ 8,325.0 հազ. դրամ: Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը համեմատվել են և պարզվել է, որ 9 կետից բաղկացած «Հիմնական պահանջների նկարագրությունը» բաժնում թվով 5 կետեր կրկնվում են, իսկ 8 կետից բաղկացած «Գնման առարկայի նկարագրերը» բաժնում թվով 3 կետեր նույնպես կրկնվում են:

Հերկանք

Արդյունքում, տարբեր տարիների մատուցված ծրագրի հաշվապահական աութորսինգի ծառայությունները կատարվել են տարբեր գներով:

Առաջարկ

Տարբեր գներով, տարբեր տարիների մատուցված նույնատիպ ծառայությունների տեխնիկական բնութագրերը կազմել հստակ նշելով ըստ տարիների գնվող առարկային վերաբերվող պահանջները:

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը

“Ծրագրի հաշվապահական աուբոսրսինգի ծառայություններ” կետում արձանագրումների մասին՝

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ և «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ միջև կնքված վերոհիշյալ թվով երկու պայմանագրերի (ԵՐՋԷԿ 01/17 առ 07 օգոստոսի 2017թ. (այսուհետ առաջին պայմանագիր) և ԵՐՋԷԿ-ԳՀՇՁԲ 69/18 առ 08 օգոստոսի 2018թ.(այսուհետ երկրորդ պայմանագիր) կնքումը տեղի է ունեցել ՀՀ գնումների օրենսդրության շրջանակներում, որի մասով արտաքին աուդիտ իրականացնող մարմինը չունի որևէ առարկություն: Ինչ վերաբերում է ծառայությունների տեխնիկական բնութագրերին, ապա երկրորդ պայմանագրում բացակայում են ստորև ներկայացված ֆինանսական գործառույթները՝

- Ծրագրերի ընթացքի և նպատակների իրականացումն ապահովող քաղաքականության և/կամ ընթացակարգերի և դրանց վարման, որոնք կապահովեն և թույլ կտան դրանք ենթարկել մոնիթորինգի և գնահատել շարունակական սկզբունքներով, ընթացիկ ուսումնասիրում՝ շեղումների հայտնաբերման նպատակով.
- Խորհրդատվությունների կատարում 1-ին կետում նշված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված շեղումների ուղղման վերաբերյալ.
- աջակցություն ֆինանսական կառավարման համակարգի կիրառման ապահովմանն ու բարելավմանը, ըստ պահանջի, Խորհրդատվությունների իրականացման միջոցով: Ըստ անհրաժեշտության, բանավոր կամ գրավոր/
- Օժանդակություն՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ժամանակին և բանկի համար ընդունելի կերպով հանրային հասանելիության ապահովմանը:
- Ընթացիկ ֆինանսական վերահսկողության իրականացում, ուղղված՝ հիմնական գործունեության հետ չկապված ծախսերի չկատարմանը, փոխառություններ չվերցնելուն ու չտրամադրելուն, չմարված առևտրային վարկերի մայր գումարների և գազի դիմաց կրեդիտորական պարտքի նվազմանը:
- Կիրառի ֆինանսական կառավարման համակարգ կամ ապահովի դրա կիրառումը և պատրաստի ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն Բանկի կողմից ընդունելի հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման չափանիշներին համապատասխան այնպես, որ այդ ամենը բավարար չափով արտացոլի ծրագրին առնչվող գործարքները, ռեսուրսները և ծախսերը:
- Իրավական համաձայնագրերում սահմանված ամսաթվից ոչ ուշ տրամադրի ֆինանսական հաշվետվություններ կամ ապահովի դրանց տրամադրումը բանկին, որոնք ենթարկվել են աուդիտորական ստուգումների, և աուդիտորական ստուգումների ենթարկված տեղեկությունը բանկը կարող է ժամանակ առ ժամանակ հիմնավորված պահանջել

Առաջին կետի մասով հարկ ենք համարում նշել, որ կատարվել է Հայկական ծրագրերի աջակցությամբ վարկային պրոյեկտների անալիտիկ հաշվառման մոդուլի ստեղծում և հաջողությամբ ներդրում ԵրՋԷԿ-ում: Տվյալ աշխատանքի կատարումը հաստատվել է ծրագրի աուդիտ իրականացնող Գրանդ Թորնտոն ընկերության՝ 2017թ. ծրագրի աուդիտի իրականացման արդյունքում ՋԷԿ-ի ղեկավարությանն ուղղված նամակում:

Առաջին պայմանագրով Դի Ջի Քոնսալթինգ ընկերության անմիջական գործառույթների մեջ ներառվել է նաև ֆինանսական գործառույթները: Ընկերությունը պլանավորել է ԵրՋԷԿ-ի տարեկան ֆինանսական նախահաշիվը: Ինչպես նաև ընկերությունն է պատասխանատու եղել ՀՀ ԷԵԲՊ նախարարության պահանջած տարաբնույթ հաշվետվությունների կազմման, սահմանված ժամկետներում ներկայացման և պարզաբանումների համար: Ընկերությունը ապահովել է ՀՇԿ հետ ընթացիկ աշխատանքը (կատարողական հաշվետվությունների տրամադրում), ինչպես նաև սակագնային տարվա ծախսային հոդվածների համար փաստաթղթերի պատշաճ ներկայացումը: Ընկերությունը ամբողջ 2017թ. ընթացքում զուգահեռաբար վարել է հաշվապահության երկու

էլեկտրոնային հարթակ (նախկինում հաշվապահական հաշվառումը վարվել է 1-Շ ծրագրով, այնուհետև անցում է կատարվել ՀԾ-Ձեռնարկություն ծրագրին և ռիսկերից խուսափելու ու անցումը ապահովելու համար՝ հաշվառումը կրկնակի է տարվել): Ընկերության անմիջական հսկողության տակ է եղել և ընկերության ղեկավարությանն է տրամադրվել նաև ԵրՁԷԿ գործընկերների հետ իրավապայմանագրային հարաբերությունների օպերատիվ ֆինանսական հաշվային պարտավորությունները: Թվով հինգերորդ առաջադրանքի մասով (որն առկա է եղել առաջին պայմանագրում) ընկերությունը վերահսկել և ԵրՁԷԿ ղեկավարությանը մշտապես տեղեկացրել է Գազպրոմ Արմենիա հետ առկա կրեդիտորական պարտքի նվազման վերաբերյալ, որը 8615-AM վարկային համաձայնագրի ՄԿՑ 7-ով սահմանված 4,982,000 ԱՄՆ դոլարի վարկավորման պահանջն է:

Արդյունքում՝ 2017թ. և 2018թ. հաշվապահական աուսթորսինգի ծառայությունները կատարվել են տարբեր գներով, քանի որ դուրս են եկել վերոշարադրված ֆինանսական գործառույթները:

16. Տրանսպորտային միջոցների վրա կատարված վերանորոգման ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

«ԵՐՁԷԿ» ՓԲԸ-ի 2017թ.-ին տրանսպորտային միջոցների վրա կատարված վերանորոգման ծախսերի ուսումնասիրությունից պարզվել է որ, Ընկերությունը չ է ևս առաքելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող համարվող հարկատուների համար ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են և՛ ամորտիզացվում են» և ՀՀ կառավարության 11.04.2000թ.-ի N 161 որոշման ա) կետի՝ «Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերն համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերափոխվում է հիմնական միջոցի վիճակը և տվյալ հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի (վերագնահատված արժեքի) 10%-ը՝ այդ չափը գերազանցող մասով» պահանջները, 2017թ.-ին տրանսպորտային միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը դիտել է որպես կատարված ընթացիկ ծախսեր և շահույթից չնվազեցվող ծախսերի մեջ չի ներառել ավտոմեքենաների վրա կատարված կապիտալ ծախսերը :

Հեղևանք

Արդյունքում 2017թ. հարկվող շահույթը որոշելիս 505118 դրամ ավելի նվազեցում է կատարվել համախառն եկամտից:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համառոտ տեղեկատվություն ընկերության գործունեության վերաբերյալ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ստեղծվել է (այսուհետ՝ Ընկերություն կամ ԵրՋԷԿ) ՀՀ Կառավարության 27.11.1997թ. թիվ 538 որոշման հիման վրա:

Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որի կողմից կարգավորվում են նաև էլեկտրական էներգիայի արտադրության և մատուցած ծառայությունների սակագները:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի կառուցումը սկսվել է 2008թ. և ավարտվելու շահագործման է հանձնվել 2010թ.: Համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը ունի հետևյալ բնութագրերը.

1. էլեկտրակայանի դրվածքային/տեղակայված/ էլեկտրական հզորությունը՝ 228,6 ՄՎտ,
2. էլեկտրակայանի ջերմային հզորությունը՝ 434,9 ԳՋ/ժ:

Համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկում տեղակայված են մեկ գազատուրբինային տեղակայանք՝ 165 ՄՎտ դրվածքային հզորությամբ, մեկ շոգետուրբինային տեղակայանք՝ 63.3 ՄՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ և 434,9 ԳՋ/ժ ջերմային էներգիայի առաքմամբ, մեկ ջերմության վերականգնիչ շոգեկաթսա: Կայանի ջրամատակարարումն իրականացվում է <<Արարատյան>> ջրատարով՝ Երևան քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգից: Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկում որպես վառելիք օգտագործվում է բնական գազ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված սակագները հետևյալն են՝

1. Առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը (առանց ԱԱՀ)

01.08.2016թ-ից կազմել է 17,767 դրամ/կՎտժ

01.02.2017թ-ից կազմել է 15.459 դրամ/կՎտժ

01.02.2018թ-ից կազմել է 20.284 դրամ/կՎտժ

2. Հզորության տրամադրման սակագինը (առանց ԱԱՀ)

01.02.2017թ-ից կազմել է 5102.30 դրամ/կՎտժ

01.02.2018թ-ից կազմել է 4950.62 դրամ/կՎտժ

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ

Ընկերության 2017թ. հաստիքացուցակը հաստատվել է տնօրենների խորհրդի որոշմամբ 01.02.2017թ., հաստատված նախահաշվով աշխատավարձի ֆոնդը նախատեսվել է 696,000.0 հազ. դրամ, հաստիքային միավորների թիվը կազմել է 276, որից 25.12.2017թ.-ի դրությամբ փաստացի զբաղեցված հաստիքային միավորների թիվը կազմել է 222 միավոր: Ըստ հաստիքացուցակի փաստացի զբաղեցված 222 միավոր հաստիքների դիմաց աշխատավարձի ֆոնդը հաստատվել է 628,400.0 հազ. դրամ /41,7216+10,644.3/x12/:

Ընկերության 2018թ. հաստիքացուցակը հաստատվել է տնօրենների խորհրդի որոշմամբ 25.12.2017թ., հաստատված նախահաշվով աշխատավարձի ֆոնդը նախատեսվել է 758.681.9 հազ. դրամ, հաստիքային միավորների թիվը կազմել է 263, որից 25.12.2017թ.-ի դրությամբ փաստացի զբաղեցված հաստիքային միավորների թիվը կազմել է 229 միավոր: Ըստ հաստիքացուցակի փաստացի զբաղեցված 229 միավոր հաստիքների դիմաց աշխատավարձի ֆոնդը հաստատվել է 636.578.9 հազ. դրամ /45,242.7+7,805.3/x12/:

2017-2018թթ ընթացքում փաստացի հաշվարկված և վճարված աշխատավարձերը չեն գերազանցել նախատեսված աշխատավարձի ֆոնդերը: Հաշվեքննության ժամանակաշրջանում հաստիքացուցակով նախատեսված թափուր հաստիքները չի լրացվել: Թափուր հաստիքների համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի գումարները ուղղվել են աշխատակիցների պարգևատրման, լրավճարների և աշխատավարձի հողվածով վճարվող այլ վճարումների համար: 2017-2018թթ. աշխատակիցների համար հաշվարկվել և վճարվել է համապատասխանաբար 64,731.5 հազ. դրամ և 84,489.1 հազ. դրամ պարգևատրում: Նույն ժամանակահատվածում պայմանագրերով սահմանված հիմնական աշխատանքներից բացի Ընկերության որոշ աշխատակիցների վրա Ընկերության գլխավոր տնօրենի հրամաններով դրվել են լրացուցիչ պարտականություններ և փոխհատուցվել են լրացուցիչ ծախսեր, որոնց համար հաշվարկվել և վճարվել են 2017թ. 6,641.6 հազ.դրամ, իսկ 2018թ. 8,949.6 հազ.դրամ, ընդամենը 15,591.2 հազ.դրամ:

2. Ընկերության կողմից օտարված հողատարածքի վերաբերյալ

ՀՀ կառավարության 23.03.2017թ-ի թիվ 297-Ա որոշման համաձայն ՀՀ կառավարության, «Արմփաուեր» ՓԲԸ-ի և «Ռենկո» ՍՊԸ-ի միջև 2017թ-ի ապրիլի 27-ին կնքվել է Երևան քաղաքում 250 ՄՎտ գազային վառելիքով, կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապետելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ շրջանակային համաձայնագիր: ԵրՁԷԿ-ի և «Արմփաուեր» ՓԲԸ-ի միջև 06.03.2017թ-ին կնքված պայմանագրի համաձայն ԵրՁԷԿ-ը իր սեփականությունը հանդիսացող 60000քմ հողամասը, 1քմ 4920 դրամով, ընդամենը 295,200.0 հազ. դրամով օտարել է «Արմփաուեր» ՓԲԸ-ին Երևան քաղաքում 250 ՄՎտ գազային վառելիքով, կոմբինացված ցիկլով էլեկտրակայան կառուցելու համար: Նշված հողամասը գտնվում է կադաստրային գնահատման 8-րդ գոտում և 1քմ հողամասի

կադաստրային արժեքը կազմում է 2940 դրամ, այն անկախ գնահատող՝ «Արտկապիտալ»՝ ՍՊԸ-ի կողմից 05.12.2016թ-ին գնահատվել է 1քմ 4100 դրամով:

6. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման» շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագրի վերաբերյալ

Համաձայն 2015թ. ապրիլի 8-ին ՀՀ և Վերակառուցման և Ջարգացման Միջազգային բանկի /ՎԶՄԲ/ միջև կնքված վարկային համաձայնագրի բանկը ՀՀ-ին տրամադրում է մինչև 52 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոց էլեկտրահաղորդման ցանցի բարելավման նպատակով, որի մի մասը պետք է իրականացվեր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից, նոր ենթակայան կառուցելու նպատակով:

Ծրագրի բյուջեն կազմել է 27,863,014.0 ԱՄՆ դոլար , ներառյալ հարկեր և տուրքեր), որի ֆինանսավորման աղբյուրներն են՝

- ՎԶՄԲ-ի կողմից տրամադրվող վարկային միջոցներ՝ 22.305,514.0 ԱՄՆ դոլար (ծախսերի 80%-ը, ներառյալ հարկերը),
- ՀՀ կառավարության կողմից տրամադրվող համաֆինանսավորման գումար՝ 5,557,500.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ծախսերի 20%-ը, ներառյալ հարկերը):

2016թ. հուլիսի 14-ին , «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի և ABB AB, Substations և Cobra Instalaciones Y Servicios S.A. կոնսորցիումի միջև կնքվել է նոր ենթակայան կառուցելու վերաբերյալ պայմանագիր, որի գումարը կազմել է՝ 11,339,703.60 ԱՄՆ դոլար, 4,746,781.8 Եվրո, 6,949,029.0 Շվեդական կրոն (առանց հարկերի և տուրքերի), ընդամենը՝ 17,400,095.9 ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում կնքվել են նաև հետևյալ պայմանագրերը

Ծրագրի անհատ խորհրդատու՝ Արամ Զաքարյան, պայմանագրի գումարը՝ տարեկան 18,000.0 հազ. դրամ և ծրագրի սկզբից մինչև 31.12.2018թ. դրությամբ վճարվել է 40,948.5 հազ. դրամ:

Ծրագրի անհատ խորհրդատու՝ Տիգրան Սահրադյան, պայմանագրի գումար՝ տարեկան 8,088.9 հազ. դրամ և ծրագրի սկզբից մինչև 31.12.2018թ. դրությամբ վճարվել է 18,200.1 հազ. դրամ:

Ծրագրի անհատ խորհրդատու՝ Լիլիթ Սարգսյան, պայմանագրի գումար՝ տարեկան 3,480.0 հազ. դրամ և ծրագրի սկզբից մինչև 31.12.2018թ. դրությամբ վճարվել է 7,830.0 հազ. դրամ:

Ծրագրի խորհրդատու՝ CESI S.p.A. և INCICO S.p.A. համատեղ ձեռնարկություն և Ameria CJSC (ենթախորհրդատու), պայմանագրի գումար՝ 450.4 հազ. Եվրո, ծրագրի սկզբից մինչև 31.12.2018թ. դրությամբ վճարվել է 244,401.2 Եվրո գումար , ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը): Պայմանագիրը կնքվել է 30.06.2017թ.:

Ծրագրի սկզբից Գլխավոր կապալառուին 31.12.2018թ. դրությամբ վճարվել է 19,416,623.5 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որից՝

- ապրանքների և սարքավորումների ձեռք բերում՝ 11,183,602.38 ԱՄՆ դոլար,
- շինարարական աշխատանքներ՝ 5,592,992.7 ԱՄՆ դոլար,
- հարկեր և տուրքեր՝ 2,640,028.42 ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում 31.12.2018թ-ի դրությամբ վճարվել է 19,919,391.7 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որից՝

- Վարկային միջոցներ՝ 15,696,592.4 ԱՄՆ դոլար
- ՀՀ բյուջեի համաֆինանսավորում՝ 4,222,799.3 ԱՄՆ դոլար

2019թ. պետք է վճարվի

- Վարկային միջոցներ՝ 1,108,921.6 ԱՄՆ դոլար
- ՀՀ բյուջեի համաֆինանսավորում՝ 251,924.8 ԱՄՆ դոլար

Ակնկալվող տնտեսում

- **Վարկային միջոցներից՝ 5,5 մլն ԱՄՆ դոլար**

7. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրանսպորտային միջոցների վրա կատարված վերանորոգման ծախսերի վերաբերյալ

«ԵՐՋԷԿ» ՓԲԸ-ին պատկանող տրանսպորտային միջոցների, շահագործում ձեռքբերում և օտարում, վառելիքի և տեխսպասարկման ծախսերի վերաբերյալ ներկայացվում է աղյուսակների տեսքով.

Տրանսպորտային միջոցների վերաբերյալ

2017 թվական

աղյուսակ-1

| No: | Հոդված | Սկզբնական մնացորդ առ 01.01.2017թ. | Գնում 2017թ. ընթացքում | Վաճառք 2017թ. ընթացքում | Վերջնական մնացորդ առ 31.12.2017թ. |
|-----|--|-----------------------------------|------------------------|-------------------------|-----------------------------------|
| 1 | Ընդամենը տրանսպորտային միջոցներ, որից | 68 | 4 | 13 | 59 |
| 1.1 | շահագործվող | 25 | 4 | | 29 |
| 1.2 | չշահագործվող | 43 | | 13 | 30 |

2018 թվական աղյուսակ-2

| No: | Հոդված | Սկզբնական մնացորդ առ 01.01.2018թ. | Գնում 2018թ. ընթացքում | Վաճառք 2018թ. ընթացքում | Վերջնական մնացորդ առ 31.12.2018թ. |
|-----|--|-----------------------------------|------------------------|-------------------------|-----------------------------------|
| 1 | Ընդամենը տրանսպորտային միջոցներ, որից | 59 | 4 | 2 | 61 |

| | | | | | |
|-----|--------------|----|---|---|----|
| 1.1 | շահագործվող | 29 | 4 | | 33 |
| 1.2 | չշահագործվող | 30 | | 2 | 28 |

| Հ/Հ | Ավտոմեքենան և պ/հ | Արտադրման տարեթիվ | Ձեռք բերման տարեթիվը | արժեքը | Ընկերություն |
|-----|---------------------------|-------------------|----------------------|------------|-------------------|
| 1 | Skoda Kodiak 444DD04 | 2017 | 2017 | 21,534,000 | Չեխ ավտո ՍՊԸ |
| 2 | Toyota Camry 444QQ04 | 2017 | 2017 | 14,400,000 | Տոյոտա Երևան ՍՊԸ |
| 3 | TOYOTA COROLLA 629AM61 | 2018 | 2018 | 10,000,000 | Տոյոտա Երևան ՍՊԸ |
| 4 | TOYOTA COROLLA 023LL11 | 2018 | 2018 | 10,000,000 | Տոյոտա Երևան ՍՊԸ |
| 5 | Skoda Octavia 019GG10 | 2018 | 2018 | 9,999,000 | Չեխ ավտո ՍՊԸ |
| 6 | ՊԱԶ 32053 203AF61 | 2017 | 2017 | 13,950,000 | Կարկոմավտո ՍՊԸ |
| 7 | Գազել NEXT 084AL61 | 2017 | 2017 | 13,950,000 | Մուլտի մոթորս ՍՊԸ |
| 8 | HYUNDAI COUNTY 922AO61 | 2016 | 2018 | 30,350,000 | Մեգամոթորս ՍՊԸ |
| | ընդամենը | | | 124,183,00 | |

2017-2018թթ-ին ձեռքբերած տրանսպորտային միջոցները.

դրամ.

<<Երևանի ՋԵԿ>> ՓԲԸ-ում առկա է Hyundai HL 760-7A HHIHLCO4HC0001567 մակնիշի ամբարձիչ, 2012 թ-ի արտադրության, որը ձեռք է բերվել 2012 թ-ին Four Directions Electronics LLC ընկերությունից 56.611,7 հազ.դրամ արժեքով. ձեռք բերման նպատակն է եղել 2011-2014 թթ.-ին ընկերությունում իրականացվող <<Աձխի ծրագրի>> շրջանակներում, աձխի տեղափոխման համար: Սակայն 08.05.2019թ-ի ընկերության կողմից տրված տեղեկանքի վերը նշված ամբարձիչը 2014 թ.-ից մինչ օրս չի շահագործվում, քանի որ ընկերությունում աձխային աշխատանքներ չեն իրականացվում, սակայն վերը նշված տեխնիկայի մասով 2017 թ-ին դուրս է գրվել 435 լ. դիզ.վառելիք մեքենան ստուգելու և մարտկոցը չփչանալու նպատակով:

Օտարված տրանսպորտային միջոցների վերաբերյալ 2017-2018թթ.

| Ավտոմեքենաների անվանումը | Պետ.համ արանիշ | Հիմնական միջոցի արտադրման տարեթիվ | Հիմնական միջոցի ծեռքերման տարեթիվը | Վաճառ քի տարեթ իվը | Մնացորդային արժեք /առանց ԱԱՀ/ դրամ | Մեկնարկային գին /առանց ԱԱՀ/ ԱԱՀ/ | Վաճառքի գին /առանց ԱԱՀ/ ԱԱՀ/ |
|--|-------------------|--|---|-----------------------------|---------------------------------------|---|------------------------------------|
| ԳԱԶ-24-17 | 411LO 68 | 1989 | 1994 | 2017 | 117,338.65 | 83,333. | 41,666. |
| ԵրԱԶ-7624 91-32 ԱԴՇԶ | 398SL6 8 | 1993 | 1993 | 2017 | 53,111.66 | 50,000. | 25,000. |
| ԱվտոՖուրգոն ԵրԱԶ- 7624 | 708SU 68 | 1993 | 1993 | 2017 | 54,195.54 | 37,500. | 18,750 |
| ՊԱԶ-3201C | 416SL 68 | 1981 | 1981 | 2017 | 278,075.00 | 166,666. | 83,333. |
| ԱվտոՖուրգոն ԵրԱԶ- 7624 | 410SL 68 | 1991 | 1993 | 2017 | 54,195.54 | 37,500. | 18,750. |
| Ավտոմեքենա ԳԱԶ- 31029 | 177LL0 1 | 1997 | 1997 | 2017 | 125,708.33 | 100,000 | 50,000. |
| Ավտոմեքենա Մոսկվիչ- 2137 | 409SL 68 | 1978 | 1978 | 2017 | 54,296.67 | 33,333 | 16,666. |
| ԳԱԶ-3102 | 249SL 68 | 1991 | 1991 | 2017 | 98,520.33 | 150,000. | 75,000. |
| Տր S-40 Ս | | | 1995 | 2017 | 110,358.87 | 166,666 | 83,333. |
| Բեռնիչ 40814 բեռնունակ.5տ. | | 1987 | 1987 | 2017 | 24,755.15 | 333,333 | 166,666. |
| Կցորդ ԳԱՏՍ-4տ | | 1981 | 1981 | 2017 | 3,380.55 | 8,333.33 | 4,166. |
| Ավտոմեքենա ԵրԱԶ- 7624 (ՌԱԳ977) 85-58 ԱԴԼ | 709SU 68 | 1984 | 1984 | 2017 | 37,172.05 | 37,500 | 18,750. |
| ԳԱԶ -52 | 419SU 68 | 1981 | 1981 | 2017 | 17,739.57 | 54,166. | 27,083. |
| Ամբարձիչ ՄՊԿ-25Ա | | 1989 | 1989 | 2018 | - | 2,083,333. | 1,041,60. |

| | | | | | | | |
|-------------------------------|-------------|------|------|------|------------------|------------------|------------------|
| Ա/Մ էլ.մաստերսկ. ԳԱԶ-53-12 | 401SL 68 | 1988 | 1989 | 2018 | 739,212.01 | 450,000 | 450,000. |
| | | | | | <i>1,768,059</i> | <i>3,791,666</i> | <i>2,120,833</i> |
| | | | | | | | |

Վառելիքի ծախսի մասով դրամ.

| 2017 | Սկզբն. մնացորդ | | Մուտք | | Ելք | | Վերջն. մնացորդ | |
|-------------------|-----------------|----------------------|-------------------|---------------------|------------------|----------------------|-----------------|----------------------|
| | Քանակ լիտր | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար |
| Բենզին Ռեզույսար | 2,561.0 | 789,504.17 | 70,700.0 | 20,099,156.00 | 51,960.0 | 14,852,013.47 | 21,301.0 | 6,036,646.7 |
| Բենզին Պրեմիում | 1,820.0 | 591,500.0 | 47,000.0 | 14,216,810.0 | 41,435.0 | 12,598,939.55 | 7,385.0 | 2,209,370.45 |
| Դիզելային վառելիք | 681.0 | 211,820.0 | 17,100.0 | 5,504,500.0 | 10,835.0 | 3,483,433.5 | 6,946.0 | 2,232,886.5 |
| Մեղմված գազ | 2,000.0 | 400,000.0 | 26,000.0 | 5,200,000.0 | 25,000.0 | 5,000,000.0 | 3,000.0 | 600,000.0 |
| <i>Ընդամենը</i> | 7,062.0 | 1,992,824.17 | 160,800.0 | 45,020,466.0 | 129,230.0 | 35,934,386.52 | 38,632.0 | 11,078,903.6 |
| 2018 | Սկզբն. մնացորդ | | Մուտք | | Ելք | | Վերջն. մնացորդ | |
| | Քանակ լիտր | Գումար դրամ | Քանակ | Գումար | Քանակ | Գումար | Քանակ | Գումար |
| Բենզ.ռեզ | 21,301.0 | 6,036,646.70 | 63,000.00 | 21,525,210.0 | 64,245.0 | 20,737,071.6 | 20,056.0 | 6,824,785.08 |
| Բենզին Պրեմիում | 7,385.0 | 2,209,370.45 | 15,000.00 | 5,749,950.0 | 16,940.0 | 5,872,088.6 | 5,445.0 | 2,087,231.85 |
| Դիզելային վառելիք | 6,946.0 | 2,232,886.50 | 15,000.0 | 5,625,000.0 | 12,890.0 | 4,465,791.5 | 9,056.0 | 3,392,095.0 |
| Մեղմված գազ | 3,000.0 | 600,000.0 | 10,000.0 | 2,000,000.0 | 12,830.0 | 2,566,000.0 | 170.0 | 34,000.0 |
| <i>Ընդամենը</i> | 38,632.0 | 11,078,903.65 | 103,000.00 | 34,900,160.0 | 106,905.0 | 33,640,951.7 | 34,727.0 | 12,338,111.93 |

2017թ. Ընթացքում Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ում ավտոտեխսպասարկման վերաբերյալ

| | դրամ. | |
|---------------------------------|----------------------------------|--|
| <i>Ավտոմեքենա</i> | <i>Ավտոտեխ սպասարկման գումար</i> | <i>Սպասարկող ընկերություն</i> |
| Toyota Camry 444QQ04 | 137,499.99 | Տոյոտա Երևան ՍՊԸ |
| Գազ 31029 597LL11 | | |
| HYUNDAI SONATA 596LL11 | 696,074.99 | Մ-Բի-Ռ ՍՊԸ, Գուրիկ ՍՊԸ |
| HYUNDAI SONATA 061LL02 | 392,433.34 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| HYUNDAI ELANTRA 023LL11 | | |
| Գազ 31029 422SL68 | 309,526.67 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| Վազ 21214 869OP61 | 130,000.00 | Ա/Ջ Կարեն Տերտերյան |
| HYUNDAI H-1 627LS68 | 287,643.32 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| HYUNDAI H-1 073LU68 | 21,166.67 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| ՋիԼ 431410 417SL68 | 506,150.02 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| Գազ 3102 504LL11 | 655,458.31 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| Վազ 21213 407SL68 | 268,625.01 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| Միցուբիշի PAJERO 971LO68 | | |
| Opel Astra 87 RQ 888 պայ | | պայմանագրով |
| TOYOTA SEQUOIA 19 GG019 | | պայմանագրով |
| Վոլվո XC 90 95 QO 999 | | պայմանագրով |
| ՋիԼ մոնտաժնի 397SL68 | 561,810.03 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| ԳԱՋ 3102 055VV10 | | |
| Ուազ 3741-01 394SL68 | | |
| Գազ 3110 007LS02 | | |
| ՋիԼ ՄՄ 4505 418SL68 | 547,583.36 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| ՊԱՋ 32053 203AF61 | 78,339.87 | Գարանտսերվիս ՍՊԸ, Կարկոմավտո սերվիս ՍՊԸ |

| | | |
|-------------------------|---------------------|--------------|
| ՆՏՄԲ- | | արտադրամաս |
| Էլեկտրական արտադրամաս - | | արտադրամաս |
| ՀՇԳՑԷ Տ և ՍՇԿՎ- | | արտադրամաս |
| Տնտեսական բաժին- | | արտադրամաս |
| ՄԲ- | | արտադրամաս |
| KAB3-3270 411SL68 | 429,533.35 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| ԿԱՎՁ 685 412SL68 | 302,500.01 | Մ-Բի-Ռ ՍՊԸ |
| ԿԱՎՁ 421SL68 | | |
| Գազել NEXT 084AL61 | | |
| Bobcat | 98,083.33 | Ռաֆայել ՍՊԸ |
| ИКАРУС-250 414SL68 | | |
| Բելառուս | 574,791.68 | |
| погрузчик HL 760-7A | | չշահագործվող |
| ԿՏԱ- | | արտադրամաս |
| | 5,997,219.95 | - |

2018թ. Ընթացքում Երևանի ՋԷԿ ՓԲԸ-ում ավտոտեխսպասարկման վերաբերյալ

| | <i>Ավտոմեքենա</i> | <i>Ավտոտեխ սպասարկման գումար</i> | <i>Սպասարկող ընկերություն</i> | <i>Մեկնաբանություն</i> |
|---|------------------------|----------------------------------|-------------------------------|------------------------|
| 1 | Skoda Kodiak 444DD04 | 257,208.34 | Չեխ ավտո ՍՊԸ | |
| 2 | Toyota Camry 444QQ04 | 249,208.35 | Տոյոտա Երևան ՍՊԸ | |
| 3 | Գազ 31029 597LL11 | 195,000.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 4 | TOYOTA COROLLA 629AM61 | 48,000.00 | Տոյոտա Երևան ՍՊԸ | |
| 5 | HYUNDAI SONATA 596LL11 | 744,083.32 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 6 | TOYOTA COROLLA 023LL11 | 234,833.34 | Տոյոտա Երևան ՍՊԸ | |

| | | | | |
|----|------------------------------|------------|-------------------|-------------|
| 7 | HYUNDAI SONATA 061LL02 | 102,083.34 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 8 | Վազ 21213 407SL68 | 99,200.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 9 | HYUNDAI ELANTRA 628AM61 | 52,708.33 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 10 | Skoda Octavia 019GG10 | 34,458.30 | Չեխ ավտո ՍՊԸ | |
| 11 | HYUNDAI H-1 627LS68 | 510,583.36 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 12 | HYUNDAI H-1 073LU68 | 135,000.00 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 13 | Գազ 3102 504LL11 | 369,625.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 14 | Միցուբիշի PAJERO 971LO68 | 46,666.67 | Ֆլեշ մոտորս ՍՊԸ | |
| 15 | Գազ 3110 007LS02 | 222,625.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 16 | Գազ 31029 422SL68 | 376,500.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 17 | ՊԱՁ 32053 203AF61 | | | |
| 18 | Վազ 21214 869OP61 | 213,300.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 19 | ՋիԼ ՄՄ4505 418SL68 | | | |
| 20 | ՋիԼ 431410 417SL68 | | | |
| 21 | Ջիլ մոնտաժնի 397SL68 | 423,000.00 | Ա/Ձ Վահե Հակոբյան | |
| 22 | ԳԱՁ 3102 055VV10 | | | |
| 23 | Ուազ 3741-01 394SL68 | | | |
